




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>

1. ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ
Զանգվածային լրատվամիջոցների իրավական կարգավիճակը և նրանց դերը քաղաքացիական հասարակության ձևավորման գործում 2

2. ԱՆԱՀԻՏ ՍԱՐԴԱՐՅԱՆ
Հայաստանի Առաջին Հանրապետության արդարադատության նախարարության դիվանը և դրա գործունեության հիմնական ուղղությունները 7

3. ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Անհրաժե՞շտ է արդյոք ընթերականների ինստիտուտը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում 19

4. ՆԵԼԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
«Օրենքի որակ» եզրույթի տեսա-փիլիսոփայական բովանդակությունը 22

5. ՄՀԵՐ ՄԱՄԱՋԱՆՅԱՆ
Միավորվելու սահմանադրական իրավունքի սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում 28

6. ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքականության առաջնահերթությունները և գլոբալ գործընթացները 38

7. НАИРА ЗОГРАБЯН
ЛИЛИТ НЕРСЕСЯН
Предпосылки формирования института уголовной ответственности юридических лиц в УК РА и УК РФ 42

8. СИМОН МЕСРОБЯН
Развитие гражданского права в Российской Федерации 51

9. NARINE SOLOMONYAN
Dual citizenship through qualitative and quantitative eye
The dual sitizenship: The Armenian and American legal regulation 55

**ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ**
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
վերահսկողության վարչության առաջին կարգի մասնագետ,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի ասպիրանտ



# ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Քաղաքացիական հասարակության ձևավորման գործում շատ մեծ է նաև զանգվածային լրատվամիջոցների դերը:

Մարդկանց միջև գոյություն ունեցող գրեթե բոլոր հարաբերություններն ունեն տեղեկատվական բաղկացուցիչ: Այդ պատճառով անհրաժեշտ է որդեգրել համալիր մոտեցում ուսումնասիրելու համար քաղաքացիական հասարակության սոցիալական հիմքը, որտեղ այն դիտվում է որպես այդ հասարակության անդամների ամբողջություն, որոնք աջակցում են քաղաքացիական հասարակության ձևավորմանը և կենսագործունեությանը: Այդ աջակցությունը կարող է լինել ինչպես գիտակցված, այնպես էլ չգիտակցված և դրսևորվում է հիմնականում երեք ձևերով՝ տեղեկատվական, նորմատիվ և գործնական: Տեղեկատվական ձևը ենթադրում է մարդու մոտ որոշակի գիտելիքների առկայություն, որոնք նրան թույլ են տալիս արդյունավետ վերահսկել իշխանության գործունեությունը, կառուցել իր հարաբերությունները այլ անհատների, կազմակերպությունների, պետական իշխանության մարմինների հետ՝ ելնելով քաղաքացիական հասարակության կենսագործունեության հիմնական սկզբունքներից: Այլ կերպ ասած՝ դրանք այն գիտելիքներն են, որոնք մարդուն թույլ են տալիս լինել քաղաքացիական հասարակության լիարժեք անդամ: Դրանց մեջ ներառվում են իրավունքի ոլորտի գիտելիքները (անհատի կողմից իր իրավունքների և պարտականությունների իմացություն), քաղաքական բնագավառի գիտելիքները (պետական իշխանության մարմինների համակարգի, այս կամ այն մարմնի իրավասության սահմանների իմացություն և այլն), երկրում տեղի ունեցող իրադարձությունների իմացություն և այլն:

Առանձնակի կարևորություն ունի քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը, որը կապված է զանգվածային լրատվամիջոցների բուռն զարգացման հետ: Տեղեկատվական ոլորտում գործող քաղաքացիական հասարակության սուբյեկտները ոչ պետական զանգվածային լրատվամիջոցներն են: Նրանց դերը պետության և քաղաքացիական հասարակության մեջ շատ կարևոր է: Զանգվածային լրատվամիջոցները այսպես ասած քաղաքացիական հասարակության «աչքերն ու ականջներն են»: Զանգվածային լրատվամիջոցները կոչված են տեղեկատվություն հաղորդել քաղաքացիական հասարակությանը իշխանության գործունեության, անհատների և հասարակության իրավունքների սահմանափակման, իշխանության ներկայացուցիչների անօրինական գործունեության մասին: Հենց նրանց միջոցով է քաղաքացիական հասարակությունը վերահսկողություն իրականացնում պետության գործունեության նկատմամբ: Հենց նրանք են ապահովում քաղաքացիական հասարակության և պետության հակադարձ կապը՝ պետական իշխանության մարմիններին տեղեկատվություն հաղորդելով նրանց գործունեության նկատմամբ բնակչության վերաբերմունքի, անհատների և նրանց միավորումների խնդիրների մասին:

Քաղաքացիական հասարակության կարևորագույն հատկանիշներից է նրա բաց բնույթը, ինչը առաջին հերթին ենթադրում է մարդկանց համար տեղեկատվության բոլոր աղբյուրների մատչելիությունը՝ բացառությամբ պետական, առևտրային կամ ընտանեկան գաղտնիք պարունակող տեղեկության[1], իրականացվող հասարակական-քաղաքական միջոցառումների՝ այդ թվում

www.lawinstitute.am

ընդունվող օրենսդրական ակտերի հրապարակայնությունը, մտքի, խոսքի ազատությունը և այլն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Տեղեկատվությունը, նրա վերարտադրումն ու տարածումը ընդհանուր առմամբ մարդու տեղեկատվական իրավունքներն են, որոնք հանդիսանում են մարդու ցանկացած իրավունքների պահպանման և պաշտպանության կարևորագույն երաշխիքները: Գոյություն չունի մարդկային կենսագործունեության որևէ ոլորտ, որը այս կամ այն չափով կապված չլինի տեղեկատվության ստացման և մշակման հետ: Տեղեկացված լինելը մարդուն հնարավորություն է տալիս կենսագործունեության տարբեր ոլորտներում ճիշտ գործել:

Իսկ ինչ է տեղեկությունը: «Տեղեկատվության ազատության մասին» 2003թ. սեպտեմբերի 23-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկությունն անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):

Տեղեկատվությունը կարող է կրել անմիջական բնույթ, օրինակ՝ երկու անձանց շփման դեպքում և միջնորդավորված բնույթ: Երբ խոսքը գնում է զանգվածային լրատվամիջոցների մասին, նկատի են առնվում առանձնահատուկ միջնորդները, որոնց ի հայտ գալը հնարավոր դարձավ հասարակության զարգացման որոշակի փուլում: Այսպիսով, զանգվածային լրատվամիջոցները հենց այն միջնորդներն են, որոնք մեկնաբանում և զունազարդում են տեղեկությունը: Զանգվածային լրատվամիջոցները ոչ միայն տեղեկություն են հաղորդում, այլ նաև կատարում են սոցիալ-վերափոխման գործառույթներ: Հենց դրանում է կայանում զանգվածային լրատվամիջոցների առանձնահատկությունը հասարակության տեղեկատվական համակարգում: Զանգվածային լրատվամիջոցները բազմաֆունկցիոնալ սոցիալ-քաղաքական ինստիտուտներ են, որոնց բնութագրական են հանրամատչելիությունը, հասարակական մեծ լսարանի առկայությունը, սոցիալ-վերափոխման հնարավորությունը: Զանգվածային լրատվամիջոցների համակարգը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

1. տեղեկատվության հագեցվածություն,
2. հրապարակայնություն, այսինքն՝ սպառողների անսահմանափակ շրջանակ,
3. տեղեկատվության համար հատուկ տեխնիկական միջոցների, սարքերի առկայություն,
4. տեղեկատվության միակողմանիություն և հակադարձ կապի սահմանափակ հնարավորություն,
5. բազմատարր լսարանի առկայություն, որը ձևավորվում է այս կամ այն տեղեկության նկատմամբ ուշադրության կենտրոնացման արդյունքում:

Զանգվածային լրատվամիջոցները հանդիսանում են հասարակության համար երկրագնդում տեղի ունեցող իրադարձությունների, փաստերի, երևույթների, գործընթացների վերաբերյալ տեղեկատվության ամենահասանելի կարևորագույն աղբյուրը[2]:

Համաձայն «Զանգվածային լրատվության մասին» 2003թ. դեկտեմբերի 13-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ զանգվածային լրատվության միջոց նշանակում է լրատվություն իրականացնելու միջոց, որը բաժանորդագրությամբ կամ առանց դրա, վճարովի կամ անվճար հիմունքներով տարածվում է՝

- մշտական անվանում, հերթական համար և ամսաթիվ ունեցող պարբերական թողարկումներով՝ նյութական կրիչի վրա, որոնց միևնույն բովանդակությամբ օրինակների քանակը պակաս չէ հարյուրից,
- հեռուստառադիոհաղորդմամբ,
- հանրային հեռահաղորդակցության ցանցով՝ որպես որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի և լրատվություն ներառող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պարբերականությունից, պահման ժամանակի տևողությունից և այլ չափանիշներից[3]:

Ըստ էության տեղեկատվության տարածման

www.lawinstitute.am

տեխնիկական միջոցներից ելնելով՝ զանգվածային լրատվամիջոցները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

1. տպագիր մամուլ՝ տեքստի և պատկերի տպագիր վերարտադրման ձևով տեղեկատվության տարածման միջոց,

2. ռադիո՝ ձայնային տեղեկատվության փոխանցում էլեկտրամագնիսական ալիքների միջոցով,

3. հեռուստատեսություն՝ տեսաձայնային տեղեկատվության փոխանցում էլեկտրամագնիսական ալիքների միջոցով[4]:

Զանգվածային լրատվամիջոցները կարող են բնութագրվել որպես սոցիալ-քաղաքական ամբողջի յուրահատուկ ինստիտուտ՝ օժտված առանձնակի կարևորությամբ, քանի որ նրանք հանդիսանում են հասարակության համար տեղեկատվության փոխանակման կարևորագույն միջոց: Զանգվածային լրատվամիջոցները ունեն մի քանի կարևորագույն խնդիրներ. նախ՝ զանգվածային լրատվամիջոցները նպաստում են ընդհանուր կոլեկտիվ նպատակների ու պահանջների քարոզմանն ու տարածմանը, որոնցով ղեկավարվում է հասարակության քաղաքական համակարգը և զանգվածային լրատվամիջոցները նպաստում են հասարակական ռեսուրսների կենտրոնացմանը, քաղաքական ծրագրերի ձևավորմանը, կառավարչական որոշումների ընդունմանը: Պետական զանգվածային լրատվամիջոցներն են հանդիսանում մի կողմից պետության և մյուս կողմից հասարակության շահերի ներկայացուցիչը:

Տեղեկատվության ազատությունը նախևառաջ նշանակում է տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում, որի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Տեղեկատվության ազատության մասին» 2003թ. սեպտեմբերի 23-ի ՀՀ օրենքով: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը կամ դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Բացառություն են կազմում այն տեղեկությունները, որոնց մատչելիությունը օրենքով սահմանափակված է (նշված օրենքի 8-րդ հոդված): Հանրամատչելի տեղեկատվության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Հաղորդակցությունը սոցիալականի անխզելի մասն է: Մարդկային անհատականությունը ի սկզբանե միտված է հաղորդակցման ամենատարբեր ձևերին ու միջոցներին: Հաղորդակցման հարաբերություններում կարևոր դեր ունեն այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են իրավունակությունն ու գործունակությունը: Տվյալ դեպքում իրավունակություն ասելով հասկացվում է անհատի հնարավորությունը ունենալ տեղեկատվական իրավունքներ և կրել պարտականություններ: Գործունակությունը մարդու հնարավորությունն է սեփական գործողություններով ձեռք բերել տեղեկատվական իրավունքներ և կրել պարտականություններ[5]:

Չնայած այն հանգամանքին, որ տեղեկատվության ոլորտում իրավունակությամբ օժտված են բոլոր անձինք՝ անկախ սեռից, տարիքից, ազգային, կրոնական կամ ռասայական պատկանելիությունից, գործունակությունը կարող է սահմանափակ լինել: Այսպես, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 2000թ. հոկտեմբերի 9-ի օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ մասնավոր հեռուստառադիոընկերությունների հիմնադիրներ չեն կարող լինել՝ 18 տարին չլրացած քաղաքացիները, դատարանի վճռով անգործունակ ճանաչված, օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող անձինք, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ[6]:

Որոշ տեղեկատվական իրավունքներ պատկանում են քաղաքացիներին Սահմանադրության ուժով և նրանց ձեռքբերման համար պետք չէ կատարել որոշակի գործողություններ: Դրանցից են օրինակ խոսքի, մտքի ազատության իրավունքները: Մյուս դեպքերում որոշակի տեղեկատվական իրավունքներ ձեռք բերելու համար քաղաքացին պետք է փոխի իր իրավական կարգավիճակը: Օրինակ, երբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող անձը զրկվում է հեռուստառադիոընկերություն հիմնադրելու իրավունքից, վերջինիս ձեռքբերման համար անհրաժեշտ է որպեսզի տվյալ անձը ազատ արձակվի և անցնի նորմալ կյանքի: Տեղեկատվական գործունակությունը ծագում է այն անձանց մոտ, որոնք իրենց հնարավորությունների,

www.lawinstitute.am

իրավական կարգավիճակի և այլ հանգամանքների ուժով կարող են անձամբ օգտագործել իրենց իրավունքները և կրել պարտականություններ: Պետությունը ևս հանդես է գալիս որպես տեղեկատվական իրավունքի սուբյեկտ, քանի որ հանդես է գալիս հիմնական տեղեկատվական ռեսուրսների և տեխնոլոգիաների սեփականատեր, ձևավորում է երկրի տեղեկատվական քաղաքականությունը, ապահովում է միասնական տեղեկատվական դաշտը և այլն: Ինչպես տեսնում ենք, տեղեկատվության ստացման և օգտագործման հիմնախնդիրներին այսօր մեծ ուշադրություն է դարձվում: Ավելի հաճախ են տեղեկատվությունը և նրան առնչվող հարաբերությունները դառնում իրավական կարգավորման առարկա: Տեղեկատվությունը ներթափանցված է մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտների մեջ, այն հանդիսանում է հաղորդակցման, փոխըմբռնման և համագործակցության միջոց: Այսօր շատ հաճախ զանգվածային լրատվամիջոցները զբաղված են իշխանություններին ծառայելով՝ մոռանալով իրենց սոցիալական գործառույթների մասին:

Քաղաքացիական հասարակության ձևավորման գործում զանգվածային լրատվամիջոցների դերի ուսումնասիրման հարցում կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական հասարակության ձևավորման գործում զանգվածային լրատվամիջոցների կարևոր դերի ընդունման հետ մեկտեղ գոյություն ունեն տարբեր տեսակետներ դրա իրականացման և զանգվածային լրատվամիջոցների կոնկրետ գործառույթների վերաբերյալ: Քաղաքացիական հասարակության ձևավորման գործում զանգվածային լրատվամիջոցների առաքելության իրագործումը կարելի է ներկայացնել երկու ձևով: Դրանցից մեկն ընդգծում է լրագրողի տեղեկատվական գործառույթը: Այսպես, կարելի է առանձնացնել քաղաքացիական հասարակությունում լրագրողի մի քանի խնդիրներ. կառավարության քաղաքականության վերլուծություն և դրա հետ կապված նյութերի հրապարակում, հասարակական տարբեր կարծիքների ներկայացում, վերլուծական նյութերի և սոցիոլոգիական տվյալների ներկայացում, որոնք հանրությանը հնարավորություն կտան ձևավորել ինքնուրույն մոտեցում քաղաքական կարևորագույն հիմնախնդիրների վերաբերյալ, կարևորագույն տնտեսական տվյալների հրապարակում: Դրանով զանգվածային լրատվամիջոցները զարգացնում են քաղաքացիական ինքնագիտակցությունը՝ նպաստելով քաղաքացիական հասարակության ձևավորմանը[7]: Երկրորդ դեպքում ընդգծվում է լրագրողի գաղափարական գործառույթը քաղաքացիական հասարակության ձևավորման գործում՝ նրա առջև դնելով որոշակի խնդիրներ. իրականացնել համակողմանի ուսումնասիրություն, հանդես գալ հասարակական փորձագետի դերում՝ ձևավորելով պատկերացումներ, հայացքներ, կարծիքներ, հանդես գալ հասարակական խորհրդատուի դերում, մասնակցել հասարակության որոշակի հոգևոր մթնոլորտի ստեղծմանը՝ զանգվածային գիտակցության ձևավորման միջոցով, հանդես գալ սոցիալական երկխոսության կազմակերպիչի դերում: Նշված խնդիրների իրագործման համար լրագրողներին օրենքով տրամադրվում են որոշակի երաշխիքներ. մասնավորապես, լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Արգելվում է որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրագրողի նկատմամբ և լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը[8]:

Այսպիսով, քաղաքացիական հասարակության գոյության հիմնարար պայմաններից մեկը հրապարակայնությունն է, որն ապահովվում է զանգվածային լրատվամիջոցների միջոցով: Ժողովրդավարության պայմաններում քաղաքացիական հասարակության ինստիտուտները և պետությունը գործում են որպես ընդհանուր համակարգի տարբեր, բայց փոխկապակցված մասեր: Քաղաքացիական հասարակության և պետության հարաբերությունները կառուցվում են հրապարակային համաձայնության հիման վրա: Ժողովրդավարական պետության քաղաքացիները օգտվում են անհատական ազատության իրավունքից, բայց միևնույն ժամանակ նրանք պետական մարմինների հետ կիսում են ապագայի կառուցման պատասխանատվությունը: Քաղաքացիական հասարակությունը զարգացման բարձր մակարդակի է հասնում

www.lawinstitute.am

միայն ժողովրդավարական քաղաքական համակարգի առկայության պայմաններում, որտեղ քաղաքացիական հասարակության և իշխանության հարաբերությունները կառուցվում են հրապարակային համաձայնության հիման վրա:

[1] Տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» 23.09.2003թ. ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը
[2] Տե՛ս Бачило И. Л. Информационное право: учебник для вузов, Москва, 2009. С. 327
[3] Տե՛ս «Զանգվածային լրատվության մասին» 13.12.2003թ. ՀՀ օրենքի 3-րդ հոդված:
[4] Տե՛ս Воробьев В.П. Система СМИ Беларуси. Мн.: Изд. центр БГУ, 2002. 252 с..(ընդհանուր)
[5] Տե՛ս Бачило И. Л. Информационное право: учебник для вузов, Москва 2009. С. 56.
[6] Տե՛ս «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 09.10.2000թ. ՀՀ օրենքի 16-րդ հոդված:
[7] Տե՛ս Засурский Я. Зарубежный опыт участия прессы в формировании гражданской компетентности населения // Роль прессы в формировании в России гражданского общества. М. 1999. С. 100 (ընդհանուր 272)
[8] Տե՛ս «Զանգվածային լրատվության մասին» 13.12.2003թ. ՀՀ օրենք:


## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

*Նորմատիվ-իրավական ակտեր*

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված համաժողովրդական քվեարկությամբ 1995թ. հուլիսի 5-ին):
2. «Հեռուստատեսության և Ռադիոյի մասին» 09.10.2000թ. ՀՀ օրենք:
3. «Զանգվածային լրատվության մասին» 13.12.2003թ. ՀՀ օրենք:
4. «Տեղեկատվության ազատության մասին» 23.09.2003թ. ՀՀ օրենք:

*Գրականություն*

5. Իմաստասիրական անդրադարձներ: Գիտական հոդվածների ժողովածու: Երևանի համալս. հրատ. 2004թ. Երևան, 198 էջ:
6. ՀՀ սահմանադրական իրավունք: Երևանի պետ. համալս.: Երևան 2003թ. 608 էջ:
7. Засурский Я. Зарубежный опыт участия прессы в формировании гражданской компетентности населения // Роль прессы в формировании в России гражданского общества. М. 1999. 272 с.
8. Воробьев В.П. Система СМИ Беларуси. Мн.: Изд. центр БГУ, 2002. 252 с.
9. Бачило И. Л. Информационное право: учебник для вузов, Москва, 2009. 474 с.



## РЕЗЮМЕ

***Правовое положение средств массовой информации и их роль в формировании гражданского общества***

В данной работе теоритическому анализу подвергаются важнейшие вопросы, касающиеся правового статуса средств массовой информации, основных принципов их деятельности, направлений и задач. Представляется их роль и значение в жизни общества и государства. Правовой статус средств массовой информации представляется не только в рамках правовых актов, лежащих непосредственно в основе их формирования, но и в контексте правовых актов некасающихся их непосредственно. Отражается важность посреднической миссии средств массовой информации между обществом и государством. Предлагаются механизмы для повышения эффективности их деятельности.



## SUMMARY

***Legal Status of Mass Media and its Role in Composing of Civil Society***

This article provides theoretical analysis of important issues concerning the legal status of Mass Media, the main concepts of directions and issues of its functions. The article describes the role of the Mass Media in the State and in the society. The legal status of Mass Media is described not only within the legal norms directly set in the basis of its composition but also within the context of other legal norms concerned to it indirectly. It is seen in the article the necessity of composition of Public Council as well as the important mediating mission between public and State. The article stresses mediating mission between the State and the society in regard to the Mass Media. It is suggested several mechanisms and structures as to strengthening and developing the work of Mass Media.

**ԱՆԱՀԻՏ ՍԱՐԴԱՐՅԱՆ**
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին Հանրապետության արդարադատության նախարարության կենտրոնական ապարատի կարևոր օղակն ու նախարարության աշխատող մարմինը նախարարի դիվանն էր (մինչև 1920թ. երկրորդ կեսն այն կոչվում էր գրասենյակ): Նախարարության դիվանը ըստ նախարարության հաստիքացուցակների իր գործունեության սկզբից մինչև վերջ կրել է որոշակի կառուցվածքային փոփոխություններ և ընդլայնվել, ինչը պայմանավորված էր դիվանի աշխատանքային ծանրաբեռնվածության աճով:

**Արդարադատության նախարարության դիվանը վարում էր օրենսդրական բնույթի գործերը և մասնակցում էր նախնական օրինաստեղծ աշխատանքին:** «Օրենսդրական» բնույթի գործերի տակ հասկացվում էր օրենքների փոփոխման, լրացման և մեկնաբանման գործերը, գրագրությունը ինչ որ պաշտոնների և հաստիքների հիմնադրման, վերափոխման կամ վերացման հարցերով, ինչպես և արդարադատության նախարարության կառավարմանը ենթակա որևէ մասի լավագույն կառուցման միջոցառումների իրականացման մասին գործերը[1]: Դիվանը նախարարության տեղական հիմնարկությունների վերստուգումների, հաշվետվությունների և այլնի արդյունքներում կամ ստորին օղակների առաջարկությունների հիման վրա մանրամասն մշակում էր այդ նախագծերը, իհարկե, նախարարի գիտությամբ, հիմնավորում դրանց ընդունման անհրաժեշտությունը կամ մերժումը, մասնակցում էր զանազան գերատեսչություններից ուղարկված օրինագծերի քննարկմանը և տալիս էր եզրակացություններ դրանց վերաբերյալ: Այս գործընթացում արդարադատության նախարարի խորհրդի և դիվանի գործունեությունը սերտորեն առնչվում էին: Վերջնական տեսք ստացած և Նախարարների խորհուրդ ուղարկվող օրինագծերի տակ ստորագրում էր ոչ միայն արդարադատության նախարարը, այլ նաև դիվանի տեսուչը:

Արդարադատության նախարարությունը աշխատանքներ էր տանում գործող օրենսդրության կողիֆիկացման, համակարգման ու թարգմանության ուղղությամբ, իր իրավասության սահմաններում հրապարակում էր շրջաբերական հրահանգներ գերատեսչական մարմինների կողմից օրենքների կիրառման կարգի ու այլ հարցերով[2]: Այն ժամանակահատվածներում, երբ օրինաստեղծ գործառնությունն իրականացնում էին Հայաստանի խորհուրդը կամ Հայաստանի պառլամենտը, արդարադատության նախարարության, մասնակցությունն օրինաստեղծ գործունեությանը հանգում էր այն բանին, որ նախարարությունը մշակում էր օրենքների նախագծերը, իսկ այնուհետև դրանք արդարադատության նախարարի կողմից առաջարկվում էին Նախարարների խորհրդի նիստերի քննարկմանը: Կառավարության կողմից հավանություն ստանալու դեպքում այդ օրինագծերը ուղարկվում էին օրենսդիր մարմինների (Հայաստանի խորհրդի, իսկ հետագայում Հայաստանի պառլամենտի) դիվաններին: Այստեղ դրանք խորհրդարանական ընթացակարգերին համաձայն դառնում էին քննարկման առարկա: Այն ժամանակահատվածներում, երբ օրենսդիր գործառույթն իրականացնում էր կառավարությունը, նախարարների կամ այլ գերատեսչությունների կողմից Նախարարների խորհուրդ մտցված օրինագծերը հաստատվելուց հետո ստանում էին օրենքի ուժ:

Հայաստանի խորհրդի, իսկ այնուհետև Հայաստանի պառլամենտի և Նախարարների խորհրդի նիստերի պահպանված օրակարգերի, արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդարադատության նախարարության գերատեսչության գծով համարյա բոլոր օրենքները

www.lawinstitute.am

մինչև ընդունվելը և հրապարակվելը որպես օրինագծեր մշակվել են արդարադատության նախարարությունում: Այս օրենքներն ըստ իրենց առարկայի, այսինքն՝ հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտի, կարելի է բաժանել մի քանի պայմանական խմբերի: Առաջինը դա դատական շինարարությանը կամ դատարանակազմությանը վերաբերվող օրենքներն էին, որոնք այստեղ հետազոտության առարկա չենք դարձնի դրանց բավականին մանրազնին ուսումնասիրված լինելու պատճառով[3]: Արդարադատության նախաարարությունում մշակված և օրենսդիրի կողմից ընդունված օրենքների երկրորդ խումբը վերաբերում էր արդարադատության իրականացման ընթացակարգերին: Այս խմբի օրենքներով փոփոխվում էին կամ լրացվում էին գործող քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենքները: Դատավարական բնույթ ունեցող օրենքներից էին՝

ա) 1918 թ. սեպտեմբերի 28-ին Հայաստանի խորհրդի կողմից ընդունված «Քրեական դատավարության կանոնադրության մի քանի հոդվածների փոփոխման մասին» օրենքը,

բ) Նախարարների խորհրդի 1919 թ. հունիսի 25-ի «Հաշտարար ատյաններում վկաների հարցաքննության կարգը փոխելու մասին» օրենքը[4],

գ) Հայաստանի պառլամենտի 1920 թ. ապրիլի 3-ի «Հաշտարար և ընդհանուր դատական հաստատությունների մեջ քրեական գործերի համար առնելիք գումարները բարձրացնելու մասին» «Հաշտարար և ընդհանուր դատական հաստատությունների մեջ քաղաքացիական գործերի համար առնելիք գումարները բարձրացնելու մասին» օրենքները[5],

դ) Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 13-ի «Դատաստանական հարկերի արդար վճռաբեկման գրավականների և թղթերի տուրքի ավելացման մասին» օրենքը[6],

ե) Հայաստանի պառլամենտի 1920 թ. ապրիլի 9-ի «Դատական կատարածուների վարձատրությունների ժամանակավոր սակը փոխելու մասին», օրենքը[7],

զ) Նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 20-ի «Դատական հաստատությունների կանոնագրքի 461 հոդվ. մեջ նշված գումարն ավելացնելու մասին» օրենքը[8]:

Արդարադատության նախարարությունում մշակվել են նաև օրինագծեր, որոնք վերաբերվում էին քրեական իրավունքի ոլորտին և որոնցով առաջարկվում էր փոփոխություն մտցնել գործող քրեական օրենսդրության մեջ, կամ էլ որպես հանցագործություն սահմանում էին նոր հանրորեն վտանգավոր արարքներ: Այդպիսի օրինագծերից, որոնք հետագայում ընդունվել են օրենսդիր մարմինների կողմից հատկապես աչքի են ընկնում Նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 8-ի «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին ժամանակավոր օրենքը»[9]: Այս օրենքով սահմանվում էին առանձին հանցավոր արարքներ, դրանց հանցակազմերի հատկանիշները, պատժամիջոցներն այդ արարքները կատարելու համար: Օրենքով սահմանված որոշ հանցավոր արարքներ կրկնում էին գործող քրեական օրենսդրությունը հանցավոր արարքի հանցակազմի հատկանիշները սահմանման մեջ (բայց ոչ պատժամիջոցների): Սակայն սահմանվում էին նոր հանցատեսակներ, որոնք գործող օրենսդրության մեջ չկային: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության անկախության դեմ քարոզչություն մղելը»[10]: Քրեաիրավական բովանդակություն ունեցող օրենքներից էին նաև «Պետական դրամանիշեր կեղծելու դեմ պատիժներ սահմանելու մասին օրենքը»՝ ընդունված 1920 թ. օգոստոսի 20-ին, իսկ այնուհետև «Պաշտոնեական հանցագործությունների մասին ժամանակավոր օրենքը», ընդունված 1920 թ. հոկտեմբերի 2-ին՝ Նախարարների խորհրդի կողմից[11]:

Հայաստանի Առաջին Հանրապետության արդարադատության նախարարությունում մշակվել են նաև համաներման (ամնիստիայի) ակտերի նախագծեր: Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ ընդունված առաջին համաներման ակտը հմարվում է «1919 թ. Մայիսի 28-ի ներման հրովարտակը»[12]: 1919 թ. մայիսին Հանրապետությունում պատրաստվում էին հանդիսավոր կերպով նշելու Հայաստանի Հանրապետության հռչակման և անկախության տարեդարձը: Համաներման ակտի ընդունման նախաձեռնությունը ելնում էր արդարադատության նախարարության կառուցվածքում գործող Հայաստանի բանտային տեսուչից: Բանտային տեսուչը 1919 թ. մայիսի 27-ին՝ անկախության տարետարձի նախօրեին զեկուցագիր է ներկայացրել արդարադատության նախարարին: Այդ զեկուցագրով բանտային տեսուչը առաջարկում էր նախարարին այդ օրը նշանավորել նաև ընդհանուր ներման ակտով, որով «հայրե-

նիքի համար նշանավոր, հանդիսավոր և ուրախալի այդ օրը ... ընդգծել նաև Հայաստանի բանտերում պահվող կալանավորների վիճակի թեթևացմամբ, որպեսզի մեր հայրենիքի յուրաքանչյուր անդամ՝ լինի դա ազատ քաղաքացի, թե ազատազրկված ուրախալի ընդունի այդ պատմական օրը»[13]: Արդարադատության նախարարը նույն օրը ներկայացնում է այդ մասին Նախարարների խորհրդին, որն այդ պահին, համաձայն ապրիլի 27-ի Հայաստանի խորհրդի օրենքի, օժտված էր օրենսդրական լիազորություններով: Նախարարների խորհուրդը համաձայնվում է նախարարների փաստարկների հետ և ընդունում է օրենք (հրովարտակ), որում ասված էր «Ի նշանավորումն մայիսի 28-ի ազատել վարչական կարգով ձերբակալվածներին և ներել մինչև մայիսի 28-ը մեղանչած հանցագործների պատժի կեսը»[14]: Համաներման մեկ այլ ակտի նախագիծ արդարադատության նախարարությունը մշակել է 1920 թ. հունվարին: Առիթն այս անգամ Հայաստանի Հանրապետությունը դաշնակիցների կողմից դեֆակտո ճանաչելն էր (1920 թ. հունվարի 19): Արդարադատության նախարարը «Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչելու առթիվ մեղադրյալներին ներումն շնորհելու մասին»[15] օրինագիծը զեկուցվել է Նախարարների խորհրդին, որը օրինագիծն օրենսդրական նախաձեռնության կարգով ուղարկվել է խորհրդարան[16]: Սակայն այդ օրինագիծը Հայաստանի պառլամենտում չի ընդունվել[17]:

Հայաստանի Առաջին Հանրապետությունում արդարադատության նախարարությունն աշխատանքներ է տարել նորանկախ պետության հիմնական օրենքի՝ Սահմանադրության մշակման ուղղությամբ: Արխիվային փաստաթղթերի հետազոտությունը ցույց է տալիս, որ արդարադատության նախարարությունում 1920 թ. սկզբներին քայլեր են ձեռնարկվել սահմանադրության նախագծի մշակման ուղղությամբ: Այդ ժամանակ արդարադատության նախարարությունը ղեկավարում էր Ա. Չիլինգարյանը: Ենթադրում ենք, որ նախարարն հանրապետության հիմնական օրենքի՝ Սահմանադրության նախագծի մշակման ուղղությամբ աշխատանքները տարել է հանրապետության քաղաքական ղեկավարության հանձնարարությամբ: Այդպիսով, հանրապետության քաղաքական ղեկավարությունը փոխել էր իր սկզբնական դիրքորոշումը, այն է՝ ապագայում սահմանադիր ժողովի միջոցով սահմանադրության ընդունումը: Արխիվային փոնդերում պահպանվել են արդարադատության նախարար Ա. Չիլինգարյանի նամակներն ուղղված Ս. Տիգրանյանին և Հ. Մանանդյանին: Ա. Չիլինգարյանը 1920 թ. ապրիլի 14-ի նամակով առաջարկում է նրանց կազմել ՀՀ Սահմանադրության նախագիծը մեկ ամսվա ընթացքում[18]: Վերջիններս պատասխան նամակում հարցում էին անում թե «ինչպիսի՞ Սահմանադրության մասին է խոսքը: Արդյո՞ք պետական կազմակերպման ձևն ու մարմիններն որոշող մի մնայուն հիմնական օրենք նախագծելու խնդիր է դրվում այժմ, որով ՀՀ ապրելու է հետագայում»[19], և որի մշակումը նրանք համարում էին դեռ վաղ Հայաստանի պետական կյանքի արտաքին անորոշության պատճառով, «թե ավելի համեստ-համառոտ մի օրենքի մասին է խնդիրը, որ պետք է ձևավորի և որոշի այն հիմունքը, որով ներկայումս վարվում է և առաջիկայում էլ ղեկավարվելու է մեր հանարպետությունն իր մարմիններով», որը որպես իրավական փաստաթուղթ իրավաբանական ձևակերպում կտար Հայաստանի Հանրապետության պետական կյանքի առկա, փաստացի վիճակին: Արդարադատության նախարարի՝ Ա. Չիլինգարյանի պատասխանում խնդիր է դրվում մշակել մշտական Սահմանադրության և ոչ թե ժամանակավոր Սահմանադրության նախագիծ[20]:

**Արդարադատության նախարարությունը հատուկ քայլեր էր ձեռնարկում իրավաստեղծ մշակույթի մակարդակի բարձրացման ուղղությամբ:** Արխիվային փաստաթղթերի հետազոտությունը ցույց է տալիս, որ Առաջին Հանրապետության իրավական համակարգի սրված հիմնախնդիրներից էր նաև իրավաստեղծ իրավաբանական տեխնիկան, օրինաստեղծ աշխատանքի որակական կողմերի ապահովումը: Օրինականության և կայուն իրավակարգի ապահովման անհրաժեշտ պայմաններից մեկն էլ հարաբերականորեն կայուն, որակյալ օրենսդրական ակտերի, որպես իրավական համակարգի նորմատիվային հիմքի, առկայությունն էր: Իրավական կարգավորման արդյունավետության ապահովման, օրինականության պահանջների կենսագործման համար անհրաժեշտ է ինչպես փոփոխվող իրադրության պայմաններում կոշտ կերպով կայուն օրենսդրությունը, այնպես էլ դրա աներդիատ շարժը, անկայունությունը, ինչն ակնհայտ նկատեցինք վկաների և՛ երդման, և՛

www.lawinstitute.am

բերման ենթարկելու կարգի վերաբերյալ օրենքները վերլուծելիս: Հայաստանի Առաջին Հանրապետության օրենսդիր մարմինները հանրապետության գոյության ողջ շրջանում չորս անգամ անդրադառնալով այդ հիմնահարցերի իրավական կարգավորմանը, այնուամենայնիվ չկարողացան ստեղծել իրավական կարգավորման օպտիմալ տարբերակ, վերացնել արդարադատության իրականացման խոչընդոտները: Պատճառները նրանում էին, որ իրավապահ աշխատանքում նախ չկար որևէ փորձ, և անշուշտ մշակույթ, ինչի հետևանքով առաջարկվող իրավապահ լուծումները համակարգված չէին, դրանք չէին կառուցված ժամանակի իրամայական խնդիրների վրա: Այդպիսով օրենսդիր մարմինները չէին կողմնորոշվել իրավապահ աշխատանքի ռազմավարական ու մարտավարական ուղղությունների հարցում, որից և ելնելով պետք է կազմեին հանրապետության հասարակական կյանքի առանձնահատուկ պահանջմունքներից ու կարիքներից բխող որոշակի օրենսդրական ծրագրեր ու իրագործեին:

Առաջին Հանրապետությունում նոր հիմնադրված իրավապահ կառուցակարգի ոչ արդյունավետ և իրավիճակին ոչ համապատասխան գործունեության պատճառ էին օրենսդիր մարմինների անընդհատ փոփոխությունը՝ սկզբում Հայաստանի խորհուրդ, այնուհետև Նախարարների խորհուրդ, Հայաստանի խորհրդարան, այնուհետև նորից Նախարարների խորհուրդ: Նման «հարաշարժությունը» հանգեցնում էր ոչ միայն օրենքների անարդյունավետության, օրինականության ու իրավակարգի անկայունության, այլև հեղինակազրկում էր հենց օրենսդիր իշխանությանը և բարձրագույն իրավական կարգավորիչին՝ օրենքին: Օրենսդրական տեխնիկայի նման թերությունները հետևանք էին ոչ միայն որոշակի օբյեկտիվ պատճառների, այլ նաև սուբյեկտիվ՝ այսինքն օրենսդիր մարմինների կամ իշխանությունների անձեռնահասության: Կյանքի իրական պահանջներին ու կարիքներին համապատասխան օրենքներ ստեղծելու և հրապարակելու համար նրանք պետք է ունենային նախ և առաջ որոշակի պատրաստվածություն, փորձառություն և մասնագիտական ունակություններ: Այսինքն՝ կարևորվում էր տեսական և գործնական որոշակի հմտություններ ունեցող իրավաբանների մասնակցությունն իրավապահ աշխատանքին, նրա բոլոր փուլերում: Սակայն Հայաստանի Առաջին Հանրապետությունը զրկված էր նման հնարավորությունից, որովհետև հայ ժողովրդի կրթված, գիտակ ներուժը, հատկապես իրավագետների ծանրակշիռ մասը գտնվում էին Հայաստանից դուրս: Նույնիսկ դատական համակարգում համապատասխան պաշտոնյաների համալրման հարցում կային դժվարություններ, էլ ուր մնաց իրավապահ ոլորտը: Օրինակ՝ 1919 թ. ընտրված Հայաստանի պառլամենտի 80 պատգամավորներից իրավաբանական կրթություն ունեին ընդամենը տասնվեցը: Ընդ որում նրանց մեծ մասը կամ Երևանում չէր, կամ էլ աշխատում էր գործադիր իշխանության մարմիններում և դրանով իսկ զրկված էր պատգամավորի կոչումից: Այս պայմաններում, եթե հնարավոր չէր օրենքների իրականությանը, հասարակական հարաբերություններին համապատասխանող որակական աստիճանն ու իրավաբանական արդյունավետությունն ապահովելը, գոնե նոր ընդունվող օրենքը կամ գործող օրենքների լրացումներն ու փոփոխությունները պետք է համապատասխանեին գործող օրենսդրությանը, որպեսզի բացառվեր օրենսդրության մեջ խառնաշփոթը, կոլիզիաները, թյուրիմածությունները, որոնցով առանց այդ էլ լի էր այդ ժամանակի օրենսդրությունը (կայսերական, Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Անդրկովկասի Սեյմի, Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմինների):

Եթե Հայաստանի խորհրդում, իսկ այնուհետև Հայաստանի պառլամենտում օրենքների ընդունման խորրհրդարանական ընթացակարգը գոնե որոշ չափով երաշխավորում էր այդպիսի թերություններից օրենքների զերծ մնալը, ապա նույնը չենք կարող ասել գործադիր իշխանության՝ Նախարարների խորհրդի մասին, հատկապես այն ժամանակաշրջաններում, երբ նա օժտված էր օրենսդրական լիազորություններով: Պատճառը կայանում էր նրանում, որ կառավարությունում իրավապահ ընթացակարգը շատ պարզ ու հասարակ էր, ինչը չէր կանխում գործադիրի ընդունած օրենքների թերությունները: Նմանատիպ օրինագծեր և օրենքներ հանարպետության օրենսդիր մարմինների գործունեությունում հանդիպում են բավականին շատ[21]: Այդ եզրակացությունը կարող ենք հաստատել «Հաշտարար ենթակայության լրացման մասին» օրենքի օրինակով, որն ընդունել է Նախարարների խորհորդը 1919 թ. մայիսի 9-ին[22]:

Այդ օրենքի նախագիծը մշակել էր արդարադատության նախարարությունը: Օրենքը ընդունել էր օրենսդիր լիազորություններ ունեցող Նախարարների խորհուրդը: Վերջինս, լինելով քաղաքական մարմին, իր կազմով ձեռնահաս չլինելով իրավաբանական հարցերում, մանրակրկիտ չէր խորացել կարգավորման ենթարկվող հիմնահարցերի և օրինագծի բովանդակության մեջ, ընդունել էր այն պարզ քվեարկությամբ, ինչպես սովորաբար դա կատարվում էր: «Հաշտարար ենթակայության լրացման մասին» օրենքի հաստատված բնօրինակի[23], ինչպես նաև ավելի ուշ «Կառավարության լրաբեր» պաշտոնաթերթում հրապարակված տեքստի[24] համեմատական հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանք էականորեն տարբերվում են իրարից: Կառավարության լրաբերում հրապարակված օրենքի տեքստը սղագրված, սրբագրված է: Դրանում ակնհայտ թերություններ չեն նկատվում: Ենթադրվում է որ այդ սրբագրումը արվել է օրենքը ընդունելուց հետո միայն: Ենթադրում ենք, որ մինչև պաշտոնական հրատարակությունը առանց օրենսդրական ընթացակարգի անցկացման օրենքը շտկվել է: «Հաշտարար ենթակայության լրացման մասին» օրենքի բնօրինակում կա շփոթ «գողացված» և «հափշտակված» հասկացությունների միջև: Պաշտոնական հրատարակությունում հաշվի է առնված այդ դիտողությունը և «գողացված» եզրույթը փոխարինված է «հափշտակված» եզրույթով: Եթե արդարադատության նախարարությունում, որտեղ մեծամասամբ աշխատում էին մասնագետները և համարյա յուրաքանչյուր օրինագիծ քննվում էր հատուկ խորհրդակցություններում, կազմված օրինագիծն ուներ այդպիսի թերություններ, ապա մյուս նախարարություններում այս հարցում վիճակն անհամեմատ ավելի վատն էր:

Օրինաստեղծ աշխատանքում առանձնակի նշանակություն ուներ նաև իրավաբանական լեզվի և եզրութաբանության հարցը: Քանի որ չկար հայերեն իրավաբանական հասկացությունների և եզրույթների մշակված համակարգ, ապա առաջ էին գալիս դժվարություններ ու խնդիրներ նորմատիվ իրավական ակտերում դրանց իրավաբանական ճիշտ ձևակերպումների հարցում: Գործնականում օրենքների թարգմանությունը ռուսերեն բնագրերից հայերենի միշտ էլ կատարվում էր շտապ ու տառացի: Լեզվասխալների հետևանքով ստացվում էր, որ թարգմանություններն հաճախ խեղաթյուրում էին բնօրինակի իսկական իմաստը: Միևնույն հասկացությունը տարբեր ժամանակներում և տարբեր մարմինների աշխատանքում, մամուլում թարգմանվում էր տարբեր կերպ, ինչն առաջ էր բերում հասկացությունների ապարատի խառնաշփոթ, որն էլ իր հերթին հանգեցնում էր դժվարությունների պետական մարմինների գործունեության մեջ: 1918-1919 թթ. համարյա ամբողջ նախնական օրինաստեղծ աշխատանքը տարվում էր ռուսերեն: Արխիվային փոնդերում հաճախակի են օրինագծերը, որոնք կազմվել են և՛ ռուսերեն, և՛ հայերեն, ինչն հնարավորություն էր տալիս գոնե այս ձևով խուսափելու թարգմանական թերություններից[25]: Ելքն իրավաբանական հասկացությունների համակարգի մշակումն էր և դրա պաշտոնական միասնականացումը բոլոր պետական մարմինների գործունեության մեջ: Դրա առաջին քայլն իրավաբանական բառարանի կազմումն ու պաշտոնական հրապարակումն էր: Արդարադատության նախարարությունում գիտակցում էին այս միջոցառման կարևորությունը և ջանքեր էին թափվում այս ուղղությամբ աշխատանքներ տանելու համար: 1919 թ. հունիսի 25-ին արդարադատության նախարարի Նախարարների խորհրդում արված զեկուցմամբ կարևորելով իրավաբանական տերմինների բառարանի հրապարակման անհրաժեշտությունը՝ նախարարությանը հատկացվեցին վարկեր այդ աշխատանքները կատարելու համար[26]: Իրավաբանական բառարանը կազմելու էր Թիֆլիսի «Հայ փաստաբանների միություն» կազմակերպությունը[27]:

**Արդարադատության նախարարության դիվանի գործառույթ էր արդարադատության ոլորտի վիճակագրական գործի կազմակերպումը և դատավարության տեղեկագրերի հրապարակումը, ինչպես նաև նախարարության գործունեության հաշվետվությունների կազմումը**[28]: Արդարադատության նախարարությունն իր դիվանի միջոցով վարում էր նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և հիմնարկությունների կազմի և գործունեության մասին տվյալների հավաքագրումը և օրենքին համաձայն դրանց համակարգման հիման վրա դիվանը պետք է կազմեր «Արդարադատության նախարարության վիճակագրական տվյալների ժողովածու», «Քրեական գործերով վիճակագրական տվյալների ժողովածու», «Դատվածու-

www.lawinstitute.am

թյան մասին տեղեկանքների տեղեկագիր»[29]:

Համաձայն օրենքի արդարադատության նախարարությունում պետք է կազմվեին նախարարության ընդհանուր գործունեության հաշվետվությունը, այսինքն՝ նախարարության ողջ համակարգի, դրան ենթակա մարմինների ու հիմնարկությունների գործունեության ընդհանուր պատկերը ներկայացնող փաստաթուղթը[30]: Այդ հաշվետվությունը կազմվում էր արդարադատության նախարարության համակարգի մեջ մտնող տեղական և կենտրոնական մարմինների ու հիմնարկությունների, դրանց պաշտոնատար անձանց պատրաստի հաշվետվությունների, զեկույցների հիման վրա: Արդարադատության նախարարության ընդհանուր գործունեության հաշվետվությունը անհրաժեշտության դեպքում ներկայացվում էր կառավարությանը կամ հրապարակվում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այդպիսի բնույթի հաշվետվություններ արդարադատության նախարարությունում կազմվել են և արխիվային գործերում մենք հանդիպում ենք դրանց մի քանի օրինակների, որ հիմնականում կազմվում էին կառավարություն ուղարկվելու կամ մամուլի համար: Դրանց առանձնահատուկ գիծն այն էր, որ ծավալով մեծ չէին, ամենաշատը երկու թերթ և հիմնականում նկարագրում էին Հայաստանի Հանրապետության դատական համակարգը, նշում նախարարության գործունեության մաս կազմող որոշ միջոցառումների իրականացման փաստը և այլն, սակայն, ըստ էության, չէին տալիս հանրապետության դատական համակարգի գործունեության էական կողմերը, գործունեության թերությունները, դրանց պատճառները, իրավիճակի վերլուծությունը, դրանից բխող պատասխան քայլերն ու միջոցառումները: Եթե համեմատում ենք արդարադատության նախարարություն ուղարկված առանձին դատական և այլ տեղական մարմինների կենտրոն ուղարկված զեկուցագրերը և արդարադատության նախարարության համառոտ ամփոփագիր-հաշվետվությունները, որոնք ուղարկվել են կառավարությանը, ապա ակնհայտ է դառնում այն փաստը, որ այդ հաշվետվությունները չէին նկարագրում գործերի իրական վիճակն արդարադատության ոլորտում և ստեղծվում է տպավորություն, որ կառավարության առաջ նախարարները զբաղվում էին աչքակապությամբ: Այսպես, վարչապետ Հ. Օհանջանյանը 1920 թ. հոկտեմբերի 6-ին բոլոր նախարարություններից պահանջել էր կառավարություն ուղարկել տեղեկություններ նախարարության գործունեության մասին: Հաշվետվությունն ուղարկվել էր 1920 թ. հոկտեմբերի 20-ին[31]: Ինչպես և նախորդ ժամանակաշրջանում կազմված այս բնույթի փաստաթղթերը սա ևս մի քանի խոսքով նկարագրում է դատական համակարգը հանրապետությունում, տալիս արտակարգ դատարաններում քննված գործերի թվական տվյալները, թվարկում նախարարության մշակված օրինագծերը «բյուրո կառավարության» գործունեության ժամանակաշրջանում և վերջ: Իսկ այդ ընթացքում տեղերից նախարարությունը ստանում էր գործերի իրական վիճակը նկարագրող զեկույցներ, որոնք ավելի անկողմնակալ էին[32]:

**Արդարադատության նախարարության դիվանը տնօրինում էր դատական գործերով վարույթը[33]**: Այս բնույթի գործունեությունը ենթադրում էր դիվանի կողմից դեռևս ընթացքի մեջ գտնվող դատական գործերի վերաբերյալ խնդրագրերի ու գանգատների քննարկում: Որպես գործադիր գործունեություն այն իրականացվում էր դատարանակազմական և դատավարական օրենսդրության, դատական մարմինների անկախության պահպանմամբ: Անհրաժեշտության դեպքում դիվանը հասնում էր դատական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև դատախազական հսկողության պաշտոնյաների, դատական մարմիններին կից գործող պաշտոնատար անձանց դատավարական և այլ բնույթի, օրինակ՝ նոտարական, գործունեության մեջ բացթողումների ու թերությունների վերացմանը, կարգապահական վարույթի հարուցմանը:

**Արդարադատության նախարարության դիվանը վարում էր մասնավոր դեպքերի համար քաղաքացիական և քրեական օրենսդրության կիրառման հարցերը:** Մասնավոր դեպքերի համար քաղաքացիական և քրեական օրենսդրության կիրառման հարցերով վարույթը կարող էր հասցնել նաև արդարադատության նախարարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի կիրառման միջոցով գործող քաղաքացիական և քրեական օրենսդրությունը փոփոխության ենթարկելուն կամ էլ գործող քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան կնքված քաղաքացիական-իրավական պայմանագրերի՝ օրենսդրական կարգով անվավեր հայտարարելուն: Հանրապետության իրավական պրակտիկայում հանդիպում ենք այդպիսի մի քանի

www.lawinstitute.am

դեպքերի: Դրանցից առաջինը 1919 թ. մայիսի 1-ին արդարադատության նախարարության զեկուցման հիման վրա Նախարարների խորհրդի կողմից ընդունված օրենքն էր, համաձայն որի օրենսդրական կարգով Կողբի աղահանքերի կապալի պայմանագրերը համարվում էին անվավեր և գրավվում էին «ի արքունիս», այսինքն` պետականացվում էին[34]: Ըստ արդարադատության նախարարության բացատրագրի` 1918-1919 թթ. ընթացքում գյուղի «կուլակները և հարուստները» օգտվելով գյուղացիության հիմնական զանգվածի սնանկությունից և սովի մատնված լինելու հանգամանքից չնչին գումարներով գնել էին սովամահության դատապարտված գյուղացիների այգիներն ու արտերը, կապալով գնել նաև ապագա բերքը: Հանրապետության մամուլը մի քանի անգամ անդրադարձել էր այդ «օրինական թալանի» փաստերին, իսկ գավառներից բազմաթիվ դժգոհություններ էին հասնում այդ մասին: Այդպիսի բնույթի մի խմբագրական հոդված «Հանուն արդարության» վերնագրով տպագրվել է նաև 1919 թ. հունիսի 14-ին Հայ հեղափոխական դաշնակցության Երևանի կենտրոնական և տեղական կոմիտեների օրգան «Հայաստանի աշխատավոր» թերթում: Հոդվածը կառավարությունից պահանջում էր «գեթ եկող տարի սովամահության հազարավոր թեկնածուներին ու անխուսափելիորեն մահվան դատապարտվածներին փրկելու սովի ճանկերից, միաժամանակ տարրական արդարության ակտ կատարելու»[35]` օրենսդրական կարգով անվավեր հայտարարելով այդ օրինական «գնում-թալանի» պայմանագրերը: Խմբագրական հոդվածի հրապարակումից տասնմեկ օր հետո արդարադատության նախարարն օրենսդրական լիազորություններով օժտված կառավարությանը ներկայացրեց համապատասխան օրինագիծը, ինչը և ընդունվեց կառավարության կողմից որպես օրենք: Համաձայն այդ օրենքի 1918 թ. դեկտեմբերի 1-ից հետո կնքված անշարժ գույքերի վաճառման կամ բերքը կապալով տալու վերաբերյալ պայմանագրերը համարվեցին անվավեր[36]: Ուշագրավ է օրենքի ընդունման արագությունը և շտապողականությունը, առանց նախնական ուսումնասիրությունների, հենց միայն իշխող կուսակցության օրգանի կոչերով գործին ընթացք տալը:

**Արդարադատության նախարարության դիվանը վարում էր դատական, դատախազական և քննչական մարմինների արտասահմանյան համանման հիմնարկությունների հետ հարաբերությունները, ինչպես նաև գրագրությունը:** Արդարադատության նախարարության դիվանի տնօրինությանն էր պատկանում հանրապետության դատական մարմինների, դատախազության և քննչական մարմինների արտասահմանյան համանման հիմնարկությունների հետ հարաբերությունների (օրինակ` դատական հանձնարարությունների կատարում, հանցագործների հանձնում և այլն), դրանցով գրագրության վարումը, ինչպես նաև այդ կապակցությամբ ծագող բազմաթիվ այլ հարցերի տնօրինումը: Հայաստանի Հանրապետության արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունները հաճախ էին ստանում Հայաստանի Հանրապետության դատական և այլ մարմինների, հիմնարկությունների խնդրանքները միջնորդելու այդ վայրերում գտնվող մեղադրյալներին և դատապարտյալներին դիվանագիտական ճանապարհով հանրապետություն տեղափոխելու համար: Սակայն այդպիսի պահանջների կատարումը տարերային կերպով հաճախ հանդիպում էր որոշակի դժվարությունների, քանի որ չկային համապատասխան միջպետական պայմանագրեր ու պայմանավորվածություններ: Օրինակ, Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը պահանջում էր, որ Վրաստանը պատրաստ է հանձնելու նման անձանց «եթե միայն հայկական կառավարությունը կհավաստիացնի պաշտոնապես, որ նա համաձայն է փոխարինաբար հանձնելու հանցագործներին Վրաստանի կառավարությանը»[37]: Իսկ այդպիսի հավաստում կամ էլ կնքված պայմանագիր մինչև 1920 թ. գարունը չկար: Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչությունը պահանջում էր հրահանգներ այդ կապակցությամբ: Նույն հարցով 1920 թ. փետրվարի 20-ին Նախարարների խորհրդին էր դիմել նաև ներքին գործերի նախարարը, որը ևս ցուցում էր պահանջում առաջնորդվելու համար այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունները դիմում էին նախարարություն` խնդրելով հանձնել օտարերկրյա դատական և քննչական մարմինների «մեղադրական ակտերը կամ ծանուցագրերը Հայաստանի Հանրապետության մեջ ապրող անձնավորություններին»[38]: Քննարկելով այս զեկուցումները` Նախարարների խորհուրդը 1920 թ. փետրվարի 16-ին հանձնարարեց արդարադատության նախարարին կազմել համապա-

www.lawinstitute.am

տասխան օրինագիծ[39]: 1920 թ. մարտի 1-ին արդարադատության նախարարը Նախարարների խորհուրդ ներկայացրեց «Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների միջև հանցագործներին փոխադարձաբար հանձնելու և դատական իշխանությունների պահանջների փոխադարձ կատարման կոնվենցիայի» արդեն պատրաստի նախագիծը[40]:

Նախագիծը կառավարությունում հավանություն ստացավ և ուղարկվեց Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչություն, որպեսզի այն համաձայնեցնի Վրաստանի հետ: Մայիսի 10-ին արտաքին գործերի նախարարը զեկուցեց, որ Վրաստանը առաջարկում է «փոխադարձաբար հանձնել ոճրագործներին մինչև այդ առթիվ կոնվենցիայի երկկողմանի հաստատումը»: Այդպիսի շտապողականությունը երկու կառավարությունների կողմից էլ պայմանավորված էր որոշակի քաղաքական հանգամանքներով, այդ իսկ պատճառով առաջարկությունը հավանության արժանացավ: Բացի այդ արդարադատության նախարարության դիվանում պատրաստել և արտաքին գործերի նախարարություն են ուղարկել երկու կոնվենցիաների երկու նախագիծ[41].

1) «Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների դատական հիմնարկությունների միջև քաղաքացիական և քրեական գործերով անմիջական հարաբերությունների մասին»,

2) «Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունների քաղաքացիներին դատական ծախսերի ապահովում ներկայացնելուց ազատելու մասին»[42]:

**Արդարադատության նախարարության դիվանը տնօրինում էր ներման գործերով վարույթը**[43]: Որոշակի կարգ այս բնույթի գործերի վարույթի համար սահմանված չէր: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդարադատության նախարարությունը դատապարտյալների ներման կամ պատժի մեղմացման միջնորդագրերը դատարանների վճիռների կամ դատավճիռների հետ միասին, նախ, ներկայացնում էր Նախարարների խորհուրդ: Կառավարությունում դրանք քննարկվելուց հետո, եթե հավանության էին արժանանում, ուղարկվում էին օրենսդիր մարմնի դիվան՝ ընթացք տալու համար[44]:

Նախարարների խորհրդին կից իրավաբանական խորհրդատվություն ստեղծելուց հետո որոշ դեպքերում այդպիսի միջնորդագրությունները հանձնվում էին իրավաբանական խորհրդատվության եզրակացությանը, այնուհետև նոր հաստատվում Նախարարների խորհրդի կողմից և ուղարկվում խորհրդարան[45]:

Դատապարտյալների ներման գործընթացը մեծ թափ առավ 1918 թ. աշնանը՝ արդարադատության նախարարությունում, երբ նախարար նշանակվեց Հայ ժողովրդական կուսակցության անդամ Ս. Հարությունյանը: Ներման գործերով վարույթի ստեղծումը կարևոր նշանակություն ուներ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո զանազան արտակարգ դատարանների ու մարմինների՝ ռազմահեղափոխական տրիբունալներ, տարբեր տեսակի ռազմադաշտային դատարաններ, կողմից կայացված ակնհայտ ապօրինի դատավճիռներով անարդարացիորեն կամ չափից դուրս խիստ պատիժ ստացած անձանց նկատմամբ արդարությունը վերականգնելու գործում: Սակայն հետզհետե այդ գործընթացը վերածվեց խառնաշփոթի, քանի որ չկար միասնական ընթացակարգ, որով կսահմանվեր իսպառ ներման կամ պատժի մեղմացման գործերով վարույթը: Ծահգրգիռ անձինք ներման խնդրագրեր ուղարկում էին և՛ արդարադատության նախարարություն, և՛ անմիջապես խորհրդարան: Հայաստանի խորհրդի, Նախարարների խորհրդի և Հայաստանի պառլամենտի օրակարգերի հետազոտությունը հաստատում է, որ ներման խնդրագրերը բավականին շատ էին և ծանրաբեռնել էին օրենսդիր ու բարձրագույն գործադիր մարմնի առանց այդ էլ բավականին հագեցած աշխատանքը: Ներման անհատական գործերի արխիվային օրինակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի խորհրդին և Հայաստանի պառլամենտին հասցեագրված խնդրագրերն այնուհետև ուղարկվում էին արդարադատության նախարարություն՝ եզրակացություն ստանալու համար: Նախարարության դիվանը այդ գործերը ուղարկում էր Երևանի շրջանային դատարանի դատախազին: Վերջինս ըստ գործի նյութերի կազմում էր զեկուցագիր-եզրակացություն և գործին կցելով վերադարձնում էր:

**Արդարադատության նախարարության դիվանը վարում էր դատական, դատախազական և քննչական մարմինների պաշտոնակազմի, սրանց կից գործող պաշտոնատար անձանց գործերը**[46]: Արդարադատության նախարարության դիվանի

www.lawinstitute.am

իրավասության այս մասն, ըստ էության, կոչված էր ապահովելու նախարարության կարևորագույն խնդիրներից մեկը՝ կատարել դատական, դատախազական, քննչական, նոտարական մարմինների պաշտոնյաների թեկնածուների ընտրություն, վարել նրանց անձնական գործերը:

**Արդարադատության նախարարության դիվանը վարում էր կարգադրիչ, տնտեսական, հաշվապահական, արխիվային և այլ բնույթի գործերը:** Արդարադատության նախարարության դիվանն էր զբաղվում դատական շրջանների և տեղամասերի կազմի, դրանց սահմանների փոփոխման, դատավորների արտագնա նիստերի կազմակերպման, վարչական միավորները մեկ դատական շրջանից մյուսին հանձնելու հարցերով:

Կարգադրիչ գործունեությունը ենթադրում էր որոշակի տնտեսական միջոցառումներ՝ ուղղված ընդհանուր իրավասության դատական մարմինները, հաշտարար դատական բաժինները և քննչական մասերը շինություններով ապահովելուն (գնում, կառուցում, վերանորոգում), դրանց կահավորելուն, ինչպես և դրանց անհրաժեշտ օրենքների հավաքածուներով, օրենսդրական ակտերով ապահովելուն, որի համար արդարադատության նախարարությունը կառավարությունից պարբերաբար խնդրում էր դրամական հատկացումներ[47]: Հանրապետությունում հատկապես լուրջ էր իրավաբանական գրականության և գործող օրենքների հավաքածուների խնդիրը, այդ իսկ պատճառով կառավարությունը հատուկ որոշումով արգելել էր դրանց արտահանումը հանրապետության տարածքից[48]: Միաժամանակ, միջոցներ էին տրամադրվել արդարադատության նախարարությանը արտասահմանում դրանք ձեռք բերելու և հանրապետություն ներկրելու համար[49]:

Առաջին Հանրապետության կյանքում «անիծյալ հարցերից» մեկն էլ հանդիսանում էր բնակարանային կամ շինությունների հարցը: Խնդիրը կայանում էր նրանում, որ նոր ստեղծվող պետական մարմինների, հիմնարկությունների և դրանց պաշտոնյաների համար բնակարաններ և համապատասխան շինություններ ճարելու հարցում իշխանությունները հանդիպում էին դժվարությունների: Արդարադատության նախարարությունը այս հարցին առնչվում էր նրանով, որ դատական պաշտոնյաների հիմնական մասը դրսից, այսինքն՝ արտասահմանից հրավիրված անձինք էին: Բացի այդ գավառներում հաշտարար դատարանները և քննչական մասերը մեծամասամբ նոր ստեղծված պետական հիմնարկություններ էին, իսկ դրանցում պաշտոնավարողները՝ մայրաքաղաքից նշանակված ծառայողներ: «Բնակարանային ճգնաժամը» մեղմացնելու նպատակով Նախարարների խորհուրդը 1919 թ. հուլիսի 3-ին ընդունել էր օրենք «Պաշտոնեական անձանց և պետական հիմնարկությունների համար Հայաստանի Հանրապետության քաղաքներում բնակարաններ և կացարաններ բռնագրավելու կանոնների և բռնագրավման հանձնաժողովներ կազմելու մասին»[50]: Համաձայն այդ օրենքի՝ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության այլ քաղաքներում ստեղծվում էին բնակարաններ և կացարաններ բռնագրավելու հանձնաժողովներ: Այդ հանձնաժողովներին իրավունք էր տրվում կատարել բնակարանների ու կացարանների բռնագրավում պետական հաստատությունների և դրանց ծառայողների համար: Օրենքը ժամանակավոր էր և գործելու էր մինչև 1920 թ. հունվարի 1-ը: Արդարադատության նախարարությունը միաժամանակ մշակել էր օրինագիծ «Բնակարանների և այլ ապրելու շենքերի սահմանային գների մասին», որը վերոհիշյալ օրենքի հետ միասին Նախարարների խորհուրդը հաստատել է հուլիսի 3-ին[51]: Օրենքը գործելու էր մինչև 1920 թ. սեպտեմբերի 1-ը: Օրենքով կարգավորվում էր գրավման ենթարկված բնակարանների կամ սենյակների համար վարձավճարի գումարը: Այս օրենքի ուժը Նախարարների խորհուրդը 1920 թ. օգոստոսի 23-ին երկարացրեց մինչև 1921 թ. հունվարի 1-ը[52]: Հետագայում խորհրդարանը ևս անդրադարձել է այս հարցին 1919 թ. հոկտեմբերի 3-ին, ընդունելով «Օրենք Երևան քաղաքի բնակարանների գրավման մասին»[53]: Այս օրենքով վերացվում էին Նախարարների խորհրդի 1919 թ. հուլիսի 3-ի օրենքի Երևան քաղաքին վերաբերվող հոդվածները և սահմանվում էին Երևանում բնակարանների գրավման նոր կանոններ:

Այսպիսով, արդարադատության նախարարության դիվանի իրավասության մեջ էին մտնում «օրենսդրական» բնույթի գործերը, վիճակագրական գործի կազմակերպումը և դատվածության տեղեկագրերի հրապարակումը, նախարարության գործունեության հաշվետվությունների կազմումը, արդարադատության նախարարությունում ստացված դատական գործերով վարույթի տնօրինումը,

www.lawinstitute.am

մասնավոր դեպքերի համար քաղաքացիական և քրեական օրենսդրության կիրառման հարցերով վարույթը, հանրապետության դատական հիմնարկությունների և քննչական մարմինների՝ արտասահմանյան համանման հիմնարկությունների հետ հարաբերությունների վարույթն ու գրագրությունը, ներման գործերով վարույթը, դատական հիմնարկությունների անձնական կազմի, ինչպես և սրանց կից գործող պաշտոնատար անձանց գործերով վարույթը, նախարարության կարգադրիչ, տնտեսական, հաշվապահական, արխիվային և այլ բնույթի գործերի վարումը:

---

[1] Տե՛ս Свод законов Российской империи. 1910. Т. 1, книга 1, часть вторая. "Учреждение министерства юстиции». С. 224, 775.

[2] Տե՛ս Հայաստանի առաջին հանրապետությունում օրենսդիր գործառնությունը 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919թ. ապրիլի 27-ը իրականացնում էր Հայաստանի խորհուրդը: Ապրիլի 27-ից մինչև Հայաստանի պառլամենտի (խորհրդարանի) գումարման օրը՝ 1919 թ. օգոստոսի 1-ը կառավարությունն օժտված է օրենսդիր լիազորություններով: Հայաստանի պառլամենտը գործել է մինչև 1920 թ. մայիսի 5-ը: Մայիսի 5-ից սկսած մինչև հանրապետության անկումը խորհրդարանը հատուկ օրենքներով իր լիազորությունները հանձնում էր կառավարությանը:

[3] Տե՛ս Հայաստանի առաջին հանրապետությունում դատական շինարարության հիմնահարցերի ու դատարանակազմական օրենքների մասին մանրամասն տե՛ս «*Վաղարշյան Ա.Գ.* Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը (1918-1920 թթ.), Եր., 2006» պատմաիրավական հետազոտությունում:

[4] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 14, թ. 144:

[5] Տե՛ս Հայաստանի պառլամենտի օրենքների հավաքածու, Երևան, 1920, թիվ 7, էջ 45-51: Երկրորդ օրենքը փոփոխության էր ենթարկում և լրացնում քաղաքացիական դատավարության կանոնադրության այն հոդվածները, որոնք վերաբերում էին դատական տուրքերին, տուգանքներին, ինչպես նաև վկաների, հոգևորականների, փորձագետների վարձատրության կարգին ու չափերին:

[6] Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1919, էջ 41:

[7] Տե՛ս Հայաստանի պառլամենտի օրենքների հավաքածու: Երևան, 1920, թիվ 8, էջ 60:

[8] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 162, 1-ին մաս, թ. 68:

[9] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 162, թ. 8:

[10] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 58, թ. 114:

[11] Տե՛ս Բացի վերոհիշյալ օրենքներից Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունվել են քրեական իրավունքի ոլորտի հասարակական հարաբերությունները կարգավորող այլ օրենքներ, ինչպես օրինակ 1919 թ. հուլիսի 24-ի Նախարարների խորհրդի օրենքը «Մահվան պատժի մասին» /տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ.25 և գ. 69, թ. 162/, և այլն: Սակայն դրանց նախագծերի մշակմանն արդարադատության նախարարությունը որևէ առնչություն չի ունեցել:

[12] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 114:

[13] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 66:

[14] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 114: Ներման «հրովարտակն» ընդունվել է հապշտապ կերպով, առանց պատշաճ իրավաբանական մանրամասնությունների, ինչի պատճառով համաներումը որոշ պատժատեսակների նկատմամբ կիրառելիս առաջանում էին դժվարություններ: Օրինակ, կիրառել էր համաներումը մահապատժի դատապարտվածների նկատմամբ, թե ոչ: «Հրովարտակի» կիրառման բարդությունների հարցն առաջինը հարուցեց Երևանի շրջանային դատարանի ընդհանուր ժողովը՝ (1919 թ. հունիսի 11-ին) դիմելով արդարադատության նախարարին: Խնդիրը քննարկելու համար նախարարը հրավիրեց դատական, դատախազաքննչական պաշտոնյաների հատուկ խորհրդակցություն, որը քննարկելով հարցը, մշակեց մայիսի 28-ի ներման հրովարտակը լրացնող օրենքի նախագիծը (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 29, թ. 85): Այդ նախագիծը որպես հրովարտակի լրացուցիչ հոդվածներ և պարզաբանումներ Նախարարների խորհուրդը հաստատել է 1919 թ. հուլիսի 8-ին (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 7 և ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 64 (բուն օրենքն է):

[15] Տե՛ս Արդի իրավաբանական եզրույթաբանությանը համապատասխան պետք է լինի «համաներում» կամ «ընդհանուր ներում»:

[16] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 24:

[17] Տե՛ս Բացի արդարադատության նախարարության կողմից մշակված կամ առաջարկված համաներման ակտերից Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունվել են նաև այլ համաներման ակտեր, որոնց նախագծերի մշակման հետ արդարադատության նախարարությունը չի առնչվել: Այդպիսի օրենքներից է «Քրեական հանցագործների վերաբերմամբ դատարանների որոշումների կատարումն առկայելու մասին» օրենքը, որն հաստատվել է 1920 թ. նոյեմբերի 11-ին Նախարարների խորհրդում (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 255, ֆ.

www.lawinstitute.am

199, ց. 1, գ. 162, 2-րդ մաս, թ. 321): Համաներման մեկ այլ ակտ ընդունվել է 1920 թ. դեկտեմբերի 2-ին, Նախարարների խորհրդի կողմից: Համաձայն այդ ակտի բոլոր քաղաքական հանցագործներն ազատվում էին բանտարկությունից (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 162, 2-րդ մաս, թ. 351):

[18] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 150, թ. 13:

[19] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 150, թ. 13:

[20] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 150, թ. 12: Թե ի՞նչ է տեղի ունեցել հետագայում սահմանադրության մշակման հարցում, հնարավոր չէ պարզել, որովհետև վերը նշված երկու նամակներից բացի որևէ այլ փաստաթուղթ, հատկապես իրավական, չի պահպանվել և հասել մեզ: Ամենայն հավանականությամբ 1920 թ. մայիսյան խռովությունը, դրանից հետո ծավալված իրադարձությունները, իսկ այնուհետև հանրապետության անկումը խանգարեցին սահմանադրության նախագծի մշակման աշխատանքներին, և Հայաստանի Առաջին Հանրապետությունն այդպես էլ չունեցավ իր հիմնական օրենքը՝ սահմանադրությունը:

[21] Տե՛ս Առաջին հանրապետությունում իրավաստեղծ իրավական գործունեությունն ամբողջական հետազոտության չի ենթարկվել: Այս հարցում կան առանձին հրապարակումներ որոշակի ոլորտներում ընդունված օրենքների որակական թերությունների վեր հանման ուղղությամբ: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին», «Արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի կանոնադրություն» օրենքների նմանօրինակ թերությունները վեր են հանվել Ա.Գ. Վաղարշյանի Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը (1918-1920 թթ.), Եր., 2006 պատմաիրավական հետազոտությունում (տես այդ աշխատության 99-117, 146-176 էջերը:

[22] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 93:

[23] Տե՛ս ՀՀ ԱԱ ֆ. 199, ց. 1, գ. 33, թթ. 64-66:

[24] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 207:

[25] Տե՛ս Սակայն պետական մարմինների, այդ թվում նաև դատարանների գործավարությունը հայացնելուց, «ազգայնացումից» հետո դժվարությունններն ավելի շատացան:

[26] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 144:

[27] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 92:

[28] Տե՛ս  Свод законов Российской империи, 1910, Т. 1, книга 5, часть вторая. "Учреждение министерства юстиции», п. 3, 4. С. 224, 775.

[29] Տե՛ս Չնայած օրենքի այս կանոնին, ամենայն հավանականությամբ, այդպիսի տեղեկագրեր ՀՀ-ում չեն հրապարակվել: Համենայն դեպս արխիվային նյութերում նման փաստաթղթերի կամ այդ հաստատող փաստերի չենք հանդիպել:

[30] Տե՛ս Свод законов Российской империи. 1910. Т. 1, книга 5, часть вторая. "Учреждение министерства юстиции», п. 3, 4. С. 224, 775.

[31] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 121, թ. 371:

[32] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 117, թթ. 176-177:

[33] Տե՛ս Свод законов Российской империи, 1910, Т. 1, книга 1, часть вторая. "Учреждение министерства юстиции», п. 5, 10. С. 224, 775.

[34] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, թ. 79:

[35] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919, հունիսի 14, թիվ 71:

[36] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 144:

[37] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 28, թ. 87:

[38] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 28, թ. 82:

[39] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 28, թ. 83:

[40] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 39:

[41] Տե՛ս Երկու փաստաթղթերի հետագա  ճակատագրի մասին որևէ տվյալ մեզ չհաջողվեց հայտնաբերել: Ամենայն հավանականությամբ դրանք հայ-վրացական կոնֆերանսում ընթացք չեն ստացել:

[42] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թթ. 70-78:

[43] Տե՛ս Свод законов Российской империи, 1910, Т. 1, книга 1, часть вторая. "Учреждение министерства юстиции». С. 224, 775.

[44] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 21:

[45] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 47:

[46] Տե՛ս Свод законов Российской империи, 1910, Т. 1, книга 1, часть вторая. "Учреждение министерства юстиции». п. 2. С. 778.

[47] Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1919,  էջ 56՝ «Արդարադատության նախարարության նոր բացված հաշտարար բաժինների և քննչական մասերի սկզբնական կահավորման համար վարկ բանալու մասին»:

[48] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 147:

[49] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 144:
[50] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 16, թ. 270:
[51] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, թ. 151 և ֆ. 199, ց. 1, գ. 16, թթ. 179-186:
[52] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 162, 2-րդ մաս, թ. 241:
[53] Տե՛ս Հայաստանի պառլամենտի օրենքների հավաքածու, Երևան, 1919, N 1, էջ 18-21:


**РЕЗЮМЕ**

***Диван министерства юстиции Первой Республики Армения и основные направления его деятельности***

Настоящая научная статья посвящена важному звену централоьного аппарата министерства юстиции Первой Республики Армении /1918-20г.г./ - Дивану министра.

Это был действующий орган министерства, который осуществлял ряд полномочий: вел дела законодательного характера и участвовал в предварительной законотворческой деятельности, предпринимал меры по повышению уровня законотворчвеской культуры, организовывал статистическое дело в сфере юстиции и обнародование ведомостей судимости, а также составление отчетов о деятельности министерства. Диван министра возглавлял судопроизводство, в том числе производство по делам о помиловании, а также, в частных случаях, проблемы применения гражданского и уголовного законодательства, вел отношения с аналогичными иностранными учреждениями судебных, следственных органов, органов прокуратуры, а также ведал канцелярией, вел дела аппарата судебных, следственных органов, органов прокуратуры, должностных лиц, действующих при них, а также осуществлял деятельность распорядительного, экономического, бухгалтерского, архивного и иного характера.



**SUMMARY**

***Divan of the Ministry of Justice of the First Republic of Armenia and the Main Directions of Its Activities.***

This scientific article is devoted to the very important central apparatus of the ministry of justice of the First Republic of Armenia/1918-1920/: minister's divan.

This was a body within the ministry of justice, which carried out several functions:

• handling issues of legislative nature, and participated in preliminary lawmaking process;

• taking measures to improve the level of the legislative culture;

• organizing the statistic process in the field of justice and publishing the bulletin of convictions, as well as reporting the activities of the ministry;

• managing court cases including proceedings of amnesty, application of civil and criminal legislation issues in certain matters;

• handling court, prosecutor and investigative bodies' relations with foreign identical bodies and carried out the correspondence between them;

• fulfilling the cases of courts, prosecutors, investigative bodies' staff and the cases of the officials acting under those bodies;

• realizing regulatory, economic, accounting, archive and other activities.

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ



# ԱՆՀՐԱԺԵ՞ՇՏ Է ԱՐԴՅՈՔ ԸՆԹԵՐԱԿԱՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ընթերակաների ինստիտուտը առաջացել է Ռուսաստանում 17-րդ դարի կեսերին և քրեադատավարական օրենսդրության զարգացման ընթացքում գրեթե չի ենթարկվել էական փոփոխությունների: Ավելի ուշ ժամանակաշրջանում ընթերակաների ինստիտուտը նախատեսվեց նաև Խորհրդային Հայաստանի քրեական դատավարության օրենսդրությամբ և մինչ օրս պահպանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Խորհրդային ժամանակաշրջանի դատավարագետները ընթերակաների ինստիտուտի անհրաժեշտությունը կասկածի տակ չէին դնում և դիտարկում էին այն, որպես հասարակությանը հանցագործությունների բացահայտմանը և նախաքննությանը ներգրավելու միջոց[1]: Սակայն արդի ժամանակաշրջանում ընթերակաների ինստիտուտի անհրաժեշտության վերաբերյալ քրեական դատավարության տեսության մեջ միասնական մոտեցում չկա: Որոշ հեղինակներ, օրինակ՝ Մ. Վանդերը և Վ. Խսայենկոն, հանդես են գալիս ընթերակաների ինստիտուտի անփոփոխ պահպանման համար՝ նշելով, որ նրանց մասնակցությունը քննչական գործողություններին ավելի հուսալի է դարձնում ապացույցների հավաքման գործընթացը թույլատրելիության և վերաբերելիության տեսանկյունից[2]:

Մ. Սելեզնյովը կարծում է, որ ընթերակաների ինստիտուտը պետք է գործի մշտական հիմունքներով և պետք է օրենքով ամրագրել ընթերակաների պատասխանատվության և նյութական պարգևատրման մեխանիզմներ: Սակայն բացառում է ընթերակաների մասնակցությունը դիակը ճանաչման ներկայացնելու և մարդու կամ կենդանու դիակի զննման ժամանակ[3]:

Ռ. Ս. Բելկինը արդարացիորեն նշում է, որ ընթերակաները իրենց անձեռնահասության պատճառով չեն կարող ընկալել քննչական գործողության օրինականությունը, նպատակը և օբյեկտիվությունը, չեն հասկանում, թե ինչ է տեղի ունենում և մեծամասամբ անվերապահորեն վստահում են քննիչին[4]:

Վ. Տ. Տոմինը նշում է. «Ընթերակաների մասնակցությունը դա պրակտիկ աշխատողի խնդիր է, որը շատ տեսաբանների անծանոթ է: Դժվարությունը սկսվում է նրանից, որ անհրաժեշտ է գտնել այնպիսի մարդկանց, որոնք համաձայն կլինեն վերցնել իրենց վրա այդպիսի պարտականություններ»: Տեսաբանը կարծում է, որ քննչական գործողություններին ընթերակաների մասնակցության պահանջին պետք չէ այդպիսի կատեգորիկ նշանակություն տալ, ավելի նպատակահարմար է գտնել դրան փոխարինող արդյունավետ այլ միջոց[5]:

Ի. Ն. Կոժևնիկովը անվանում է ընթերականերին «քննիչի գլխացավ» և առաջարկում է նրանց մասնակցությունը պահպանել միայն խուզարկության կատարման ժամանակ[6]:

Հայրենական իրավաբաններից Ա.Ս. Ղամբարյանը իր «Առաջարկներ քրեական դատավարության օրենսգրքի բարեփոխումների վերաբերյալ» գիտական հոդվածում առաջարկում է նոր քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսել քննչական գործողություններին ընթերակաների մասնակցության մասին ինստիտուտը և նշում է. «Ընթերակաների ինստիտուտը նախատեսված է եղել խորհրդային քրեական դատավարության օրենսդրությամբ, իսկ ներկայումս այն պահպանված է հիմնականում հետխորհրդային մի շարք պետությունների քրեական դատավարության օրենսգրքերով: Այս ինստիտուտի գործողության ընթացքում պարզվել է, որ այն, ընդհանուր առմամբ, չի ծառայում իր նպատակներին, ավելին՝ խոչընդոտում է նախաքննության իրականացմա-

նը: Այսպես, առանձին դեպքերում քննչական գործողություններին ընթերակաների մասնակցությունը վտանգավոր է նրանց կյանքի և առողջության համար: Այսպես, պետական սահմանին հակառակորդի գնդակից զինվորի մահվան փաստով դեպքի վայրի զննությանը պետք է մասնակցեն նաև ընթերակաները, ինչը վտանգավոր է ընթերակաների կյանքի համար: Նույն իրավիճակը կարող է առաջանալ նաև վտանգավոր պայմաններում բնակարանի խուզարկության դեպքում:

Նոր քրեական դատավարության օրենսդրությունը պետք է կառուցվի քրեական արդարադատության եվրոպական գաղափարախոսության հիման վրա, ուստի պետք է նկատի ունենալ նաև հարցի վերաբերյալ եվրոպական փորձը: Միևնույն ժամանակ, կարծում ենք, ընթերակաների ինստիտուտի վերացումը պետք է լրացվի քննչական գործողությունների ընթացքը տեսանկարահանման և լուսանկարահանման եղանակով ֆիքսելու մասին օրենսդրական պահանջով կամ այլ կառուցակարգերով»[7]:

Ընթերակաների ինստիտուտի անարդյունավետության մասին կարծիք են արտահայտել նաև միջազգային կառույցների փորձագետները: Օրինակ՝ ԵԱՀԿ-ն և ԺՀՄԻԳ-ը Հայաստանում (2008թ. ապրիլից մինչև 2009թ. հունիս) իրականացրել են դատավարությունների մոնիտորինգի ծրագիր: Վերջինիս ամփոփիչ զեկույցը ներառել է բազմաթիվ առաջարկություններ քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումների վերաբերյալ: Այսպես, միջազգային փորձագետները, խոսելով ընթերակաների ինստիտուտի անարդյունավետության մասին, կարծիք են արտահայտել, որ մեղադրյալի իրավունքները պաշտպանելու և քննչական մարմինների չարաշահումները կանխելու առավել արդյունավետ միջոց կարող է լինել քննչական գործողություններին պաշտպանի ներկայությունն ապահովելը[8]:

Դիտարկվող ինստիտուտի անարդյունավետության մասին հաճախ կարելի է հանդիպել նաև հայկական մամուլի էջերում: Օրինակ՝ «Գրեթե բոլոր դեպքերում ընթերակա կոչվածները կամ չգիտեն իրենց անելիքը, կամ գիտեն, բայց վախենում են քննչական մարմնի որևէ գործողության դեմ առարկել, կամ պարզապես «շտատով» կադրեր են և միշտ համագործակցում են իրավապահների հետ»[9]: Փաստաբան Վահե Գաբրիելյանը «Հրապարակ» թերթին տված իր հարցազրույցում ասում է. «Ոստիկանությունը հաստիքով ընթերականեր է պահում» և բերում է փաստեր Գյումրու ընդհանուր իրավասության դատարանում իր մասնակցությամբ ընթացած գործերից. «Երկու կին՝ Սուսաննա Աշուղյանը և Արաքսյա Կյուրեղյանը, Գյումրիում մոտ 10 գործով հանդես են եկել որպես ընթերակա: Մենք ապացույցներ ունենք, որ ոստիկանությունում նրանք «դրույքով ընթերակա» են աշխատում»[10]:

Կարծում ենք, որ վերոնշված փաստարկները համոզիչ կերպով վկայում են ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում ընթերակաների ինստիտուտից հրաժարվելու որոշման օգտին: Այս եզրահանգումը մերկապարանոց չդիտելու համար նշենք, որ այս ինստիտուտը նախատեսված չէ աշխարհի ոչ մի երկրի քրեական դատավարության օրենսդրությամբ (մեզ հայտնի բացառություններով): Գերմանիայում, Ֆրանսիայում, Կանադայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում և այլ զարգացած երկրների քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ անձի մասնակցությունը նախաքննությանը, առավել ևս անձի, ով օժտված լինի քննչական գործողությունների կատարման փաստը, բովանդակությունը, ընթացքը կամ արդյունքները հաստատելու իրավունքով: Բնականաբար հարց է առաջանում՝ եթե ընթերակաների ինստիտուտը այդքան արդյունավետ է, ինչի՞ ոչ մի երկիր չի ընդգրկում այն իր օրենսդրության մեջ: Այն չէ՞ պատճառը, որ դրա արդյունավետությունը կարծեցյալ է:

---

[1] Տե՛ս Теория доказательств в советском уголовном процессе: Часть особенная / Под ред. Жогина Н.В. М., 1967. С. 258-260.
[2] Տե՛ս Вандер М., Исаенко В. Объективизация и защита доказательств по уголовным делам // Законность.1996. N 10. С. 2.
[3] Տե՛ս Селезнев М. Понятой или свидетель? // Законность. 1998. N 1. С. 35-38.
[4] Տե՛ս Белкин Р.С. Очерки криминалистической тактики: Учеб. пособ. Волгоград: ВСШ МВД РФ, 1993. С. 139-140.
[5] Տե՛ս Томин В.Т. Острые углы уголовного судопроизводства. М., Юрид. лит., 1991. С. 193 – 194.

[6] Տե՛ս Кожевников И.Н. Упорядочить полномочия следователя // Российская юстиция. 1997. N12. С. 22-24.
[7] Տե՛ս Օրենք և իրականություն 2008, թիվ 10, էջ. 10-13:
[8] Տե՛ս Մարտիրոսյան Էլմիրա, «Միջազգային փորձագետները հայ տուժողներից զգուշանում են, ծանր հանցագործներից՝ ո՞չ», «Իրավունք» թերթ, 03.12.2010:
[9] Տե՛ս նույն տեղում:
[10] Տե՛ս Ավոյան Ռուզան, «Հաստիքով ընթերականներ», «Հրապարակ» թերթ 22.07.2010թ.:


## РЕЗЮМЕ

***Нужен ли институт понятых в уголовном процессе Республики Армения?***

Нужен ли институт понятых в уголовном процессе Республики Армения? Среди ученых и практиков по этому поводу существуют различные точки зрения. Большинство практических работников считает, что институт понятых должен быть отменен. Другие считают, что его надо сохранить. Третьи считают, что необходимо сократить количество следственных действий, производимых при обязательном участии понятых. В научной статье анализируя вышеуказанные подходы и зарубежный опыт, автор приходит к мнению, что действие данного института в уголовном процессе РА крайне неэффективно и что институт понятых должен быть отменен.



## SUMMARY

***Is there a need of identifying witnesses institution in criminal procedure of the Republic of Armenia?***

Is there a need of identifying witnesses institution in criminal procedure of the Republic of Armenia? There are different points of view among scholars and practitioners in this regard. Most practitioners believe that the institution of identifying witnesses should be repealed. Others believe that it should be retained. Still others believe it is necessary to reduce the number of investigative actions done with the compulsory participation of identifying witnesses. After the analysis of the above-mentioned approaches and international experience in his scientific article, the author comes to the conclusion that the effect of this institution in the criminal procedure of RA is extremely inefficient and that the institution of identifying witnesses should be repealed.

**ՆԵԼԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ**
ՀՀ սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական ծառայության փորձագիտական վերլուծական բաժնի առաջատար մասնագետ

# «ՕՐԵՆՔԻ ՈՐԱԿ» ԵԶՐՈՒՅԹԻ ՏԵՍԱ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքների դերի ու նշանակության մասին խոսել են դեռևս անտիկ փիլիսոփաները. Ցիցերոնն ասել է. «Օրենքները ստեղծվել են մարդկանց բարօրության համար»: Օրենքների նպատակն է կանոնակարգել հասարակական հարաբերությունները և ապահովել հասարակության անդամների փոխհամաձայնությունը: Օրեքների առջև դրված նպատակներին հասնել կարելի է միայն այն դեպքում, երբ առկա են իրավական կարգավորման արդյունավետությունը ապահովող գործոնները՝ որակյալ օրենքներ, իրավակիրառման կանոնների ապահովում, բարձր իրավագիտակցություն և իրավական մշակույթ: Իրավական կարգավորման արդյունավետության առաջին և գլխավոր նախապայմանը որակյալ օրենքների ընդունումն է: Ի՞նչ ասել է «որակյալ օրենքներ», ի՞նչ կատեգորիայով է բնութագրվում օրենքի որակյալ կամ անորակ լինելը, որոնք են այն չափանիշները, որոնցով որոշվում է օրենքի որակյալ կամ անորակ լինելը: Առանց առաջադրված հարցադրումների պատասխանների հնարավոր չէ որևէ պատկերացում կազմել և առավել ևս՝ ընդունել որակյալ օրենքներ: Վերոշարադրյալ բոլոր հարցադրումները վերաբերում են «օրենքի որակ» կատեգորիային: Չնայած իրավական կարգավորման արդյունավետության առաջնային պայմանը օրենքի որակն է, այնուհանդերձ մասնագիտական գրականության մեջ «օրենքի որակ» եզրույթը գրեթե չի քննարկվել, առկա ուսումնասիրություններն էլ շատ մակերեսային են և ոչ ամբողջական: Հիմնախնդիրը կայանում է նրանում, որ մասնագետների կողմից «օրենքի որակ» և «օրենքի արդյունավետություն» կատեգորիաները նույնացվում են և ընկալվում որպես հոմանիշներ, մինչդեռ «օրենքի որակ»-ը ինքնուրույն բովանդակություն ունեցող կատեգորիա է, որը բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունի:

«Օրենքի որակ» եզրույթի բովանդակությունը հասկանալու և «օրենքի արդյունավետություն» եզրույթից այն տարանջատելու համար անհրաժեշտ է նախ պարզել, թե ինչ ասել է «որակ» և ինչ ասել է «արդյանավետություն»:

Որպես փիլիսոփայական կատեգորիա «որակը» հանդիսանում է օբյեկտի որոշակիության արտահայտումը: Որակը առաջին հերթին գոյի հետ նույնացող որոշակիությունն է, այնպես, որ ինչ-որ բանը դադարում է լինել հենց այդ, երբ կորցնում է իր որակը[1]: Առանց որոշակիության չկա նաև բովանդակություն: Որակի շնորհիվ օբյեկտը ձեռք է բերում որոշակիություն և կայունություն: Փիլիսոփայական գիտության մեջ որակ կատեգորիան բացահայտվում է «հատկություն» կատեգորիայի միջոցով; Յուրաքանչյուր օբյեկտ օժտված է բազմաթիվ հատկություններով. այդ հատկությունների ամբողջությունն էլ հանդիսանում է այդ օբյեկտի որակը: Որակը օբյեկտի այնպիսի որոշակիությունն է, որը բնորոշում է այն որպես այդպիսին: Որակ ասելով հասկանում ենք օբյեկտի ինտեգրալ, ամբողջական բնութագրումը այլ օբյեկտների հետ դրա կապի և հարաբերությունների համակարգում[2]:

Որպես փիլիսոփայական կատեգորիա որակը չունի գնահատողական բնույթ, այս առումով այն չեզոք է, մինչդեռ կիրառական գիտություններում այն ձեռք է բերում գնահատողական բնույթ և ընկալվում որպես պատշաճ կամ ոչ պատշաճ որակ, բարձր, ցածր որակ, լավ, վատ որակ: Ինչպես արդարացիորեն նշում է Վ. Ի. Պանիոտոն՝ կիրառական գիտություններում որակը հաճախ ընկալվում է որպես օբյեկտի լավը լինելը[3]: Չնայած «որակ» կատեգորիայի մեկնաբանությունները տարբերվում են փիլիսոփայական և կիրառական գիտություններում, այնուհանդերձ դրանք չեն հակասում միմյանց: «Որակ» կատեգորիայի մեկնաբանությունը կիրառական գիտություններում հիմնվում է փիլիսոփայական գիտության մեկնաբանու-

www.lawinstitute.am

թյան վրա: Կիրառական գիտությունների կողմից «որակ» կատեգորիան գնահատողական բնույթով օժտելը պատահական չէ, քանի որ այս գիտությունների կարևորագույն խնդիրներից է գիտական հիմնավորված մեթոդոլոգիական հիմքեր մշակելը այս կամ այն օբյեկտի որակը գնահատելու համար: «Որակ» կատեգորիան ձեռք է բերում գնահատողական բնույթ նաև իրավական ուսումնասիրությունների ժամանակ:

«Արդյունավետություն» եզրույթն առաջին անգամ կիրառվել է տնտեսագիտության ոլորտում: Տնտեսական արդյունավետության որոշման հիմնախնդիրը պատմական բոլոր ժամանակահատվածներում եղել է արդիական հիմնախնդիր: Այս ոլորտում, սակայն, արդյունավետությունը գրեթե համընկնում է խնայողության հետ՝ առավել բարձր նպատակի հասնելը հնարավորինս քիչ ծախսերով: Եզրույթի կիրառելիության ոլորտների ընդլայնումը առաջացրեց վերջինիս բովանդակության ընդհանրացման անհրաժեշտություն:

Մասնագիտական գրականության մեջ չկա միասնական մոտեցում իրավական նորմի կամ օրենքի արդյունավետության հասկացության վերաբերյալ: Սկզբնապես օրենքի արդյունավետություն (էֆֆեկտիվություն) եզրույնն ընկալվում էր որպես հիմնավորվածություն, ճշտություն, օպտիմալություն, իրավական նորմի համապատասխանությունը հասարակական կյանքի պահանջմունքներին, իրավական նորմում վարքագծի լավագույն տարբերակի ամրագրում: Հետագայում այս մոտեցումը վերանայվեց և ի հայտ եկան իրարամերժ բազում կարծիքներ: Մ.Ն. Անդրյուշենկոն գտնում է, որ արդյունավետությունը նախապես սահմանված նպատակի իրագործման հնարավորության չափն է: Ըստ նրա՝ արդյունավետությունը հանդես է գալիս որպես հնարավորության չափ, խոսքը այստեղ մարդու համար առավել նպատակահարմար նպատակի իրագոծման հնարավորության չափն է[4]: Այլ խոսքերով՝ արդյունավետությունը հանդես է գալիս որպես նպատակի և տեսական հնարավորության հարաբերակցության քանակական բնութագրիչ:

Ըստ Ծարգորոդսկու՝ էֆֆեկտիվությունը վերացական հասկացություն է, որը նշանակում է միայն կիրառվող միջոցի հնարավորությունը նպաստելու սահմանված նպատակի ռեալիզացմանը: Նա մերժում էր քննարկվող կատեգորիայի գնահատողական նշանակությունը[5]:

Ս.Ն. Սամոշենկոն, Բ.Ի. Նիկիկիտինսկին, Ա.Բ Վենգորովը հանդես եկան մեկ այլ մոտեցմամբ: Նրանք մատնանշեցին արդյունավետության և արդյունքայնության անխզելի կապը: Այս հեղինակները որպես իրավական նորմերի գործողության համակարգված, կոմպլեքսային ցուցանիշ դիտարկում են դրանց օպտիմալությունը: Օպտիմալության բաղկացուցիչներն են օգտակարությունը, խնայողությունը, և իրավական նորմերի սոցիալական արժեքը: Հեղինակների կողմից իրավական նորմերի արդյունավետությունը դիտարկվում է որպես իրավական նորմերի նպատակի և արդյունքի հարաբերակցություն[6]: Վերջիններս նշում են, որ «էֆֆեկտ» տերմինը օգտագործվում է որպես արդյունք, ինչ-որ բանի հետևանք: Սակայն, օրենքի արդյունավետությունը ոչ թե պարզապես օրենքի գործողության արդյունքն է՝ որպես այդպիսին, այլ այն արդյունքը, որն առավելապես մոտ է օրենքի ընդունման ժամանակ դրա հիմքում դրված նպատակին, հետևապես օրենքի արդյունավետությունը իրավական նորմերի գործողության արդյունքի և դրանց ընդունման նպատակի հարաբերակցությունն է: Այս մոտեցումը կիսում են նաև պրոֆեսորներ Ն.Մատուզովան եւ Ա.Մալկոն: Այս հեղինակները նշում են, որ իրավական կարգավորման արդյունավետությունը դա իրավական կարգավորման նպատակի և արդյունքի հարաբերացությունն է[7]:

«Էֆֆեկտիվ» եզրույթը ծագում է լատիներեն effectus (գործողություն) բառից, և թարգմանաբար նշանակում է գործող, անհրաժեշտ ազդեցություն թողնող, անհրաժեշտ հետևանքների հանգեցնող: Այս դեպքում ենթադրվում է ոչ թե ցանկացած արդյունք, այլ միայն այնպիսին, որը տվյալ պայմաններում հանդիսանում է լավագույնը, օպտիմալը: Դա էլ, ըստ էության, այն արդյունքն է, որը նույնանում է նախապես սահմանված նպատակի հետ: Այս կարծիքը այսօր կիսում են մասնագետների մեծամասնությունը: Այսպիսով, օրենքի արդյունավետությունը ոչ թե իրավական նորմերի ներքին հատկություն է, այլ դրանց գործողության հատկանիշ, որն արտահայտվում է հասարակական հարաբերությունների վրա ներազդելով: Որպես իրավական նորմերի արդյունավետության չափանիշ ծառայում են այն նպատակները, որոնք իրագործելու համար ընդունվել են այդ օրենքները:

Անվիճելի է, որ ցանկալի արդյունքի կարելի

է հասնել միայն այն դեպքում, երբ օրենքը բավարարում է որոշակի պահանջների՝ թե՛ բովանդակային, թե՛ ձևական. այդ պահանջների ամբողջությունն էլ հենց հանդես է գալիս որպես օրենքի որակ: Օրենքի նշված հատկանիշները պայմանավորված են օրենքի՝ որպես հասարակական հարաբերությունների հիմնական աղբյուրի ներքին հատկություններով:

Փաստորեն, օրենքի արդյունավետությունը օրենքի առջև դրված նպատակների և օրենքի գործողության արդյունքների հարաբերակցությունն է, մինչդեռ օրենքի որակը օրենքի ներքին՝ բովանդակային և ձևական հատկանիշների ամբողջությունն է:

Այսպիսով, վերոգրյալը վկայում է, որ «օրենքի որակ» և «օրենքի արդյունավետություն» եզրույթները արմատապես տարբերվում են: Վերջիններս գտնվում են տարբեր հարթությունների վրա և ունեն տարբեր սկզբնաղբյուրներ: Օրենքի որակը օրենքի ներքին հատկություն է, ծնվում է իրավաստեղծագործության ընթացքում, օրենքի հատկությունների ամբողջությունն է, մինչդեռ արդյունավետությունը օրենքի արտաքին հատկություն է, ծնվում է օրենքի արտաքին գործողության արդյունքում՝ իրավակիրառման պրոցեսում, հետևաբար պահանջում է նաև իրավակիրառման կատարելություն: Օրենքի արդյունավետությունն առաջանում է հասարակական հարաբերությունների վրա ներազդելու հետևանքով և հանդիսանում է այդ ներազդեցության համար գնահատողական կատեգորիա:

Քննարկվող երկու կատեգորիաները գտնվում են սերտ կապի մեջ, բայց երբեք չեն նույնանում:

Ուշադրության է արժանի նաև օրենքի որակի սահմանի հիմնախնդիրը. այս հարցը մասնագիտական գրականության մեջ ևս չի քննարկվել: Անենք մի քանի հարցադրում՝

• ո՞րտեղից է սկսվում և որտեղ ավարտվում օրենքի որակը կազմող հատկանիշների ձևավորումը,

• արդյո՞ք այդ հատկանիշների ձևավորման գործընթացը ընդգրկում է նաև իրավակիրառումը,

• իրավական կարգավորման արդյունավետության համար պատասխանատու է միայն օրենքի որակը՞, թե դերակատարում ունեն նաև այլ գործոններ,

• հնարավո՞ր է արդյոք ոչ արդյունավետ իրավական կարգավորում որակյալ օրենքի պայմաններում:

Վերոնշյալ հարցադրումներին որոշակիորեն անդրադարձել է Վ. Լազարևը: Նա նշում է, որ պրակտիկայում «որակյալ է» համարվում այն օրենքը, որը կիրառվում է, հակառակ դեպքում այն կմնա թղթի վրա: Եթե օրենքն ընդունվում է, այն պետք է կիրառվի: Նա բացահայտորեն հայտարարում է, որ եթե օրենքը նույնիսկ ամբողջությամբ համապատասխանում է իրավունքի գաղափարներին, սակայն չի կիրառվում, այն որակյալ համարվել չի կարող[8]: Իր այս մոտեցմամբ Լազարևը, ըստ էության, արհեստականորեն ընդլայնում է օրենքի որակի սահմանները՝ վերջինիս բովանդակությունը կազմող հատկանիշների մեջ ընդգրկելով նաև օրենքի գործողությունը, որը վերաբերում է իրավակիրառմանը, ավելին՝ օրենքի որակով է, ըստ նրա, *բացառապես* պայմանավորված իրավակիրառման ինչպես իրականացումը, այնպես էլ արդյունավետությունը: Նա, փաստորեն, բացառում է ոչ արդյունավետ իրավական կարգավորման պարագայում որակյալ օրենքի գոյության հնարավորությունը:

Իրականում իրավակիրառումը և վերջինիս արդյունավետությունը պայմանավորված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, որոնք վերաբերում են ինչպես բուն օրենքին, այնպես էլ օրենքի կենսագործմանը:

Հասարակական կյանքի տարբեր կողմերի հետ իրավական նորմերի կապի բնույթն է որոշում այն պայմանները, որոնք ապահովում են դրա գործունեության արդյունավետությունը: Այդ պայմանները կարելի է դասակարգել՝ հիմք ընդունելով իրավունքի գործունեության կառուցակարգի տարրերը: Այս տեսանկյունից իրավական նորմերի արդյունավետության պայմանները դասակարգվում են երեք խմբի՝ իրավական նորմին վերաբերող պայմաններ, իրավակիրառմանը վերաբերող պայմաններ, հասարակության իրավագիտակցությանը վերաբերող պայմաններ: Քննարկենք նշված պայմանները առանձին-առանձին:

**Իրավական նորմին վերաբերող պայմաններ:** Իրավական նորմին վերաբերող պայմաններն են միայն կազմում օրենքի որակը: Այս պայմանն ապահովելու համար անհրաժեշտ է նախապատրաստել և ընդունել այնպիսի նորմեր, որոնք կլինեն

www.lawinstitute.am

գիտականորեն հիմնավորված, կհամապատասխանեն հասարակական կյանքի պահանջմունքներին, օրենսդրության զարգացման հիմնական ուղղություններին և կբավարարեն օրենքի որակի մյուս բոլոր պահանջները: Հարց է ծագում՝ ում՞ կողմից են սահմանվում այդ պահանջները: Օրենքի որակը կազմող հատկանիշները ձևավորվում են ինչպես պրակտիկայի, այնպես էլ իրավագիտության կողմից:

**Իրավակիրառ գործունեությանը վերաբերող պայմաններ:** Նույնիսկ ամենակատարյալ օրենքը երբեք չի կիրառվի կամ կունենա ոչ արդյունավետ կիրառում, եթե իրավակիրառ պրակտիկան չի համապատասխանում օրենքի պահանջներին: Իրավակիրառումը բարդ գործընթաց է, կազմված բազմաթիվ կապերից, հարաբերություններից, հետևաբար իրավակիրառման կատարելության ապահովումը ևս բարդ խնդիր է, պահանջում է մեծ ջանքեր: Իրավաստեղծագործության կատարելությունը և իրավակիրառ գործունեության կատարելությունը սերտորեն կապված են. հանդես են գալիս որպես երկու փոխկապակցված տարրերի մոդել՝ տրամաբանական և դինամիկ: Իրաստեղծագործության արդյունքում ծնվող օրենքը իրավակիրառ մարմինների համար հանդես է գալիս որպես գործունեության մոդել, սակայն, ինչպես արդեն նշվեց, իրավակիրառումը բարդ գործընթաց է, իրականացվում է անհատների կողմից և զերծ չէ սուբյեկտիվիզմից, հետևաբար հնարավոր են օրենքի կիրառման սխալներ, իրավական նորմի արհեստածին, չհիմնավորված փոփոխություններ, հնարավոր է նույնիսկ՝ նորմը ընդհանրապես չկիրառվի սուբյեկտիվ հանգամանքներից ելնելով. իրավակիրառ ակտերի անկատարությունը նույնպես կարող է հանգեցնել իրավական կարգավորման արդյունավետության նվազեցմանը:

Իրավական կարգավորման արդյունավետությունը պայմանավորված է թե՛ իրավաստեղծագործության, թե՛ իրավակիրառման կատարելության մակարդակից: Այս երկու ինստիտուտները անխզելի կապի մեջ են գտնվում: Մալկոն տեղին է նշում, որ իրավաստեղծագործությունը առանց իրավակիրառման կվերածվի ֆորմալիզմի, իսկ իրավակիրառումը առանց իրավաստեղծագործության՝ քաոսի[9]:

**Իրավագիտակցությանը վերաբերող պայմաններ:** Իրավագիտակցությունը գաղափարների, հայացքների, պատկերացումների, հույզերի գիտելիքների ամբողջություն է, որոնք արտահայտում են անհատի և հասարակության վերաբերմունքը իրավունքի և իրավական երևույթների նկատմամբ[10]: Այս պայմանները ներառում են նաև այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են օրենքների մասին իրազեկվածությունը, հասարակության կողմից հավանության արժանանալը: Որքան ավելի է հասարակությունը տեղյակ լինում օրենքների մասին, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ օրենքը կկիրառվի վերջինիս կատարյալ լինելու դեպքում: Իրավագիտակցության մակարդակը կարող է գնահատվել տարբեր մակարդակներում՝ հասարակության, խմբակային, անհատական, հետևաբար իրավական նորմի արդյունավետությունը նույնպես կարող է գնահատվել նշված տարբեր մակարդակներում:

Քննարկված պայմանները սերտորեն փոխկապակցված են: Անորակ օրենքը չի արժանանա հասարակության հավանությանը, միևնույն ժամանակ ամենակատարյալ օրենքը կարող է հավասարվել զրոյի ցածր իրավագիտակցության պայմաններում: Ավելին՝ այս համատեքստում պետք է խոսել ոչ միայն իրավագիտակցության, այլ նաև իրավական մշակույթի մակարդակի մասին, որն իր մեջ ներառում է նաև սուբյեկտի վարքագիծը ուղղված իրավական նորմերի պահպանությանը, այստեղից էլ ծնվում է իրավական էակի կատեգորիան, որը, ըստ էության, մեկ այլ ուսումնասիրության թեմա է. այստեղ պարզապես նշենք, որ օրենքի արդյունավետության համար պարտադիր են նշված բոլոր տարրերը՝ իրավաստեղծագործության կատարելություն, իրավակիրառման կատարելություն, իրավական մշակույթի և իրավագիտակցության հնարավորինս բարձր մակարդակ:

Վերոշարադրյալը թույլ է տալիս պատասխանել առաջ քաշված հարցադրումներին՝

- օրենքի որակը կազմող հատկանիշները սկսվում և ավարտվում են իրավաստեղծագործության շրջանակներում: Այս հատկանիշները վերաբերում են բուն օրենքին՝ դրա սոցիալական և իրավաբանական հատկանիշներին,
- օրենքի որակը կազմող հատկանիշները չեն ներառում իրավակիրառման գործընթացը. օրենքի որակը ամբողջությամբ ձևավորվում է իրավաստեղծագործության շրջանակներում, իրավակիրառման գործընթացում իրավակիրառը գործ

www.lawinstitute.am

ունի արդեն որակյալ կամ անորակ օրենքի հետ, և ոչնչով հիմնավորված չէ Վ. Լազարևի այն պնդումը, ըստ որի՝ օրենքը համարվում է որակյալ, միայն այն դեպքում, եթե կիրառվում է, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, իրավակիրառումը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով, որոնք կախված չեն օրենքից և դրա որակից,

• իրավական կարգավորման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն օրենքի որակով: Որակյալ օրենքը իրավական կարգավորման արդյունավետության պարտադիր պայմանն է, բայց ոչ միակը: Իրավական կարգավորման արդյունավետության համար անհրաժեշտ է նաև իրավակիրառման կատարելություն, իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձր մակարդակի առկայություն,

• քանի որ օրենքի որակը օրենքի արդյունավետության միայն մեկ պայմանը չէ, հնարավոր է որակյալ օրենքի գոյություն ոչ արդյունավետ իրավական կարգավորման պայմաններում: Տվյալ դեպքում իրավական կարգավորման արդյունավետությունը խափանվել է օրենքի արդյունավետության այլ պայմանները չպահպանելու հետևանքով:

Մասնագիտական գրականության մեջ «օրենքի որակ» և «օրենքի արդյունավետություն» եզրույթները նույնացնելը հղի է լուրջ վտանգներով: Նախ և առաջ գիտության մեջ առկա յուրաքանչյուր եզրույթ պետք է օժտված լինի բացառապես իրեն հատուկ բովանդակությամբ, կիրառվի միայն այդ բովանդակությամբ, որպեսզի ապահովվի երևույթի ճշգրտությունը, հետևաբար նաև օբյեկտիվ իրականության մեջ ճիշտ կիրառությունը: Բացի այդ առանց առանձնացնելու «օրենքի որակ» կատեգորիան, առանց վեր հանելու վերջինիս հատուկ բովանդակությունը, պարզապես հնարավոր չէ ընդունել որակյալ օրենքներ, քանզի հենց «օրենքի որակ» կատեգորիայի միջոցով են բացահայտվում օրենքի այն ներքին հատկությունները, որոնք անհրաժեշտ և բավարար են արդյունավետ իրավական կարգավորման համար: Եվ վերջապես, «օրենքի որակ» և «օրենքի արդյունավետություն» եզրույթները նույնացնելիս ոչ արդյունավետ իրավական կարգավորամման պարագայում ողջ մեղքը բարդվում է օրենսդիր մարմնի վրա՝ առանց հաշվի առնելու, որ օրենքի որակը արդյունավետ իրավական կարգավորման միայն մեկ անհրաժեշտ պայմանը չէ. իրավական կարգավորման արդյունավետությունը պայմանավորված է ինչպես օրենքի որակով, այնպես էլ՝ իրավակիրառման կանոնների պահպանմամբ, իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձր մակարդակի առկայությամբ:

---

[1] Տե՛ս Гегель. Энциклопедический словарь. Т.1, Наука логики. С. 216.
[2] Տե՛ս Введение в философию. Часть 2, М., 1990. С. 140, 142.
[3] Տե՛ս Паниото Л.И. Качество социологической информации. Киев, 1986. С. 8.
[4] Տե՛ս Андрющенко М.Н. Понятие эффективности и его философский смысл. С. 45-46.
[5] Տե՛ս Шаргородский М.Д. Наказание, его цели и эффективность. Л., 1973. С. 58.
[6] Տե՛ս Кудрявцев В.Н., Никитинский В.И., Самощенко И.С., Глазырин В.В. Эффективность правовых норм. М., 1998. С. 36.
[7] Տե՛ս Матузова Н.И., Малько А.В. Теория государства и права. М.,1997. С. 632.
[8] Տե՛ս Лазарев В. Общая теория государства и права. М., 2001. С. 366-367.
[9] Տե՛ս Матузова Н.И., Малько А.В. Теория государства и права. М.,1997. С. 632.
[10] Տե՛ս Теория государства и права. Учебн. пособие под редакций Корельского В.М., Перевалова В.Д. Екатеринбург, 1996. С. 324.

## РЕЗЮМЕ

***Теорико-философское содержание понятия “качество закона”***

В юридической литературе и в практике понятия “качество закона” и “эффективность закона” отождействляются, в то время как эти понятия имеют разные содержания, источники, разные цели и задачи, находятся на разных плоскостьях и относятся к совершенно разным сторонам категории “закон”. В рамках данной проблемы важно не только четкое разъяснение содержаний вышеназванных понятий, а необходимо также выявить границы понятия “качество закона”. Анализ границ “качество закона” требует ответы на следующие вопросы: откуда начинается и где кончается процесс формирования свойств качество закона, включает ли в себя этот процесс правоприминение, возможно ли существование качественного закона при неэффективном правовом регулировании, “качество закона” исключительно несет ли ответственность за эффективное правовое регулирование, то есть за эффективность закона.

Отождествление данных понятий чревато серезными последствиями: во первых невозможно принимать законы с высоким качеством без определения этого самого “качества”, так как внутренние свойства закона выявляются именно через эту категорию, во вторых при неэффективном правовом регулировании вся вина падает на законадателя, в то время как остальные факторы эффективности закона остаются несовершенными будучи игнорированы.



## SUMMARY

***Theoretical and philosophical content of the notion “quality of law”***

In legal literature and in practice there is a misunderstanding about the content of the notions ‘’quality of law’’ and “effectiveness of law”, they are supposed to be synonyms, whereas each of them has its own content. These terms are on different planes and have different sources. They refer to different sides of the category “law”. There is also a misunderstanding about the borders of the notion ”quality of law”. The analysis of the borders of ”quality of law” includes the following issues; where does the forming of the features of the quality of law begin and end from, whether that process also covers the process of legal enforcement, whether just the “quality of law” is responsible for the “effectiveness of law”, whether the existence of a law with high quality is possible in the case of ineffective legal regualation.

The identification of the discussed notions carries serious danger, as it is not possible to enact laws with high quality without understanding the content of a quality of law, as the internal features of the law can be revealed just through this notion, besides the differentiation of discussed notions is vital, as each time legal regulation fails the whole blame is being put on the legislature, while the other prerequisites of the effective legal regulation stay deffective as nobody puts attention to them.

ՄՀԵՐ ՄԱՄԱՋԱՆՅԱՆ
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի, սահմանադրական
և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ

# ՄԻԱՎՈՐՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարդու ցանկացած գիտակցված գործունեության հիմքում ընկած են որոշակի սկզբունքներ: «Սկզբունք» բառի իմաստը հայերենում նշանակում է որևէ տեսության՝ ուսմունքի, գիտության և այլնի հիմնական՝ ելակետային գաղափար, դրույթ[1]:

Իրավունքը, լինելով սոցիալական երևույթ, ուղղված լինելով կարգավորելու հասարակական հարաբերությունները, հիմնված է որոշակի սկզբունքների վրա: Իրավունքի սկզբունքները հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները իրավաբանորեն ամրապնդող հիմնական ելակետային դրույթներն են[2]: Իրավունքի սկզբունքները դրանք առաջնորդող գաղափարներ են, որոնք բնութագրում են իրավունքի բովանդակությունը, հասարակության մեջ նրա նշանակությունը: Մի կողմից նրանք արտահայտում են իրավունքի օրինաչափությունները, մյուս կողմից՝ իրենցից ներկայացնում են ընդհանուր նորմեր, որոնք գործում են իրավական կարգավորման ամբողջ ոլորտում և տարածվում են բոլոր սուբյեկտների վրա: Իրավունքի սկզբունքներն ուղղորդում են իրավական նորմի կատարելագործման ուղիները, օրենսդրության համար հանդես են գալիս որպես առաջնորդող գաղափարներ: Դրանք կապող օղակ են հիմնական օրինաչափությունների զարգացման և հասարակության ու իրավական համակարգի գործունեության միջև: Իրավունքի սկզբունքները կամ ուղղակի ձևակերպված են իրավական ակտերում, կամ բխում են դրանց ընդհանուր ոգուց: Իրավունքի սկզբունքները պետք է թափանցեն բոլոր իրավական նորմերի բովանդակության մեջ և հանդիսանան իրավական պետության իրավական համակարգի միջուկը:

Սույն աշխատանքում կանդրադառնանք միավորման իրավունքի սկզբունքներին՝ չհավակնելով միավորման իրավունքի սկզբունքների սպառիչ ցանկ սահմանելուն: Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն «սկզբունք» եզրույթի տարբեր սահմանումներ: Խնդիր չունենալով անդրադառնալ այդ բազմաթիվ սահմանումներին՝ սույն աշխատանքում, միավորման իրավունքի սկզբունք ասելով, նկատի ունենք այն ընդհանուր ելակետային դրույթները, որոնց հիման վրա պետք է իրականացվեն միավորման իրավունքին առնչվող օրենսդրության մշակումը, մեկնաբանումն ու կիրառումը և այդ սկզբունքները հաշվի առնելով, պետք է իրացվի միավորման իրավունքը:

*Համաչափության սկզբունք*

Համաչափության սկզբունքն այսօր համաշխարհային մակարդակով տարածված համաիրավական սկզբունքներից է[3]: Այն իր ամրագրումն է ստացել և ստանում ընդհանուր ու մասնավոր իրավունքում[4], ինչպես նաև ունի լայն կիրառելիություն անդրազգային դատարաններում (օրինակ՝ Եվրոպական դատարան, Եվրոպական Միության դատարան, ՄԱԿ-ի միջազգային դատարան, Միջազգային քրեական դատարան[5]):

Համաչափության սկզբունքը ժամանակակից իրավական մտքի ձևավորման բանալին է, առանցքային նշանակություն ունեցող գաղափարը[6]: Այն իրավագիտության նուրբ հնարքներից է, որն ուղղված է ապահովելու իրավիճակին համարժեք գործելը և ավելի մեծ վնաս չպատճառելը, քան անհրաժեշտ է իրավաչափ նպատակին հասնելու համար:

Համաչափությունը, որպես երևույթ, կիրառվում է ոչ միայն իրավագիտությունում: Ընդհանուր առմամբ՝ համաչափությունը համընդհանուր սկզբունք է, որը կարող է կիրառվել և կիրառվում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Իրավագիտության ոլորտում համաչափու-

www.lawinstitute.am

թյան սկզբունքի հանդես գալը երկար ճանապարհ է անցել: Իրավաբանական գրականության մեջ որոշ հեղինակներ նշում են, որ համաչափության սկզբունքը դեռևս Արիստոտելի կողմից հիշատակվող երևույթ է և առաջին անգամ հիշատակվել է Արիստոտելի «Էթիկա» աշխատությունում[7]: Այս տեսակետի կողմնակիցները պնդում են, որ համաչափության տեսությունը դարերի ընթացքում ծագած և զարգացում ապրած գաղափար է, որը դեռևս Արիստոտելի գաղափարներում էր արտացոլվում[8]: Իրենց աշխատություններում համաչափության սկզբունքին անդրադարձել են նաև այնպիսի մեծ մտածողներ, ինչպիսիք են Ցիցերոնը[9], Թոմաս Աքվինացին[10], Հուգո Գրոցիուսը[11]:

Ժամանակակից իրավունքում համաչափությունը, որպես հիմնարար սկզբունք, հանդես է եկել գերմանական իրավունքում: Ուստի, որպեսզի առավել լավ հասկանալի լինի համաչափության սկզբունքի մեխանիզմները, պետք է ցույց տրվի նրա տեղը և դերը, նշանակությունը և ծագումնաբանությունն ըստ գերմանական իրավունքի: Գերմանական իրավունքում վերջինս հանդիսանում էր վարչական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկը[12]: Հավելենք, որ սկզբում այն հանդես է եկել անհամաչափության արգելման սկզբունքի տեսքով, այնուհետև դարձել է գերմանական սահմանադրական իրավունքի առանցքային սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքի տեսքով[13]: Անհրաժեշտ է նշել նաև այն, որ թեև համաչափության սկզբունքը՝ որպես հիմնարար նշանակության նորմատիվ ամրագրում ստացած սկզբունք, սկզբնապես ձևավորվել և ամրագրվել է գերմանական իրավունքում, սակայն այստեղ ևս այն հադես չի եկել «մաքուր ձևով», այսինքն՝ վերջինս խիստ որոշակի հարաբերություններում է կիրառվել, օրինակ՝ կիրառվում էր միայն ոստիկանական ոլորտի հարաբերություններում[14]:

Համաչափության սկզբունքը ներթափանցել է նաև այլ երկրների իրավական համակարգը, մասնավորապես՝ այս սկզբունքն իր ամրագրումն է ստացել նաև անգլիական իրավունքում[15]: Սակայն սկզբնապես այն իր ամրագրումն է ստացել Magna charta-ում[16]:

Իր ծագումից մինչև ժամանակակից իրավունքի ձևավորումը համաչափության սկզբունքը երկար ճանապարհ է անցել, որի արդյունքում խիստ որոշակի ոլորտի կիրառելի սկզբունքից այն վերածվել է համընդհանուր կիրառելի սկզբունքի:

Համաչափության սկզբունքի (proportionality) համաձայն, քաղաքացու վրա հանրային իշխանության մարմնի կողմից դրված ցանկացած պարտականություն կամ արգելք չպետք է դուրս գա կիրառելի անհրաժեշտ միջոցների շրջանակից:

Համաչափության սկզբունքի առանցքային կարևորությունն այն է, որ այս սկզբունքի կիրառումը հնարավորություն է ընձեռում գնահատել հանրային իշխանության միջամտող ակտերի և գործողությունների իրավաչափությունն այդ միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ՝ դրանց նպատակին հասնելու հնարավորության և թույլատրելիության տեսանկյունից: Համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում հանրային իշխանության մարմինը համարժեքություն ապահովի իր կողմից կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ սահմանադրությամբ նախատեսված նպատակների միջև:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից: Դրանք են՝

1.համապատասխանություն, պիտանիություն (appropriateness/suitability),

2. անհրաժեշտություն (necessity),

3. հավասարակշռում, ողջամտություն, չափավորություն (balancing/reasonableness):

Համաչափության համաիրավական սկզբունքը բնավ օտարածին չէ ՀՀ և ՌԴ իրավական համակարգերի համար: Համաչափության սկզբունքը ՀՀ Սահմանադրության և ՌԴ Սահմանադրության 1-ին հոդվածներում հռչակված իրավական պետության սկզբունքի կարևորագույն տարրերից է: Համաչափության սկզբունքի բաղադրիչներից մեկի անհրաժեշտությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում և ՌԴ Սահմանադրության 55–րդ հոդվածում՝ որպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման կարևոր նախադրյալ:

ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության մի շարք նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելիս անդրադարձել է նաև համաչափության սկզբունքին:

Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանը 12.10.2010թ. ՍԴՈ-920 որոշման 5-րդ կետում

www.lawinstitute.am

արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«...հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով»:

Համաչափության սկզբունքի տարբեր դրսևորումներին անդրադարձել է նաև ՌԴ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում[17]:

Համաչափության սկզբունքի պահպանումը ցանկացած հիմնական իրավունքի և ազատության, այդ թվում նաև՝ միավորման իրավունքի համար չափազանց կարևոր է: Այս սկզբունքը հատկապես կարևորվում է հիմնարար իրավունքներն և ազատությունները սահմանափակելիս: Համաչափության սկզբունքը հավասարակշռության հասնելու միջոց է: Այն ուղղակի չի համակշռում իրավունքը և դրան միջամտելու պատճառը: Փոխարենն այն համակշռում է միջամտության բնույթը և աստիճանը միջամտության պատճառի հետ[18]:

Միավորվելու իրավունքի նկատմամբ կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է անցնի համաչափության թեստ: Ընդունելով, որ պիտանելիության տեսանկյունից առկա է միջամտությունների լայն շրջանակ՝ միշտ պետք է նախապատվությունը տրվի իշխանությունների հետապնդած օրինական նպատակին հասնելու համար նվազագույն միջամտությանը: Ցանկացած սահմանափակում պետք է սերտորեն կապված լինի բարձրացված կոնկրետ մտահոգության հետ և պետք է մանրամասն մշակվի իշխանությունների հետապնդած կոնկրետ նպատակներին համապատասխան: Պետությունը պետք է ցույց տա, որ ցանկացած սահմանափակում ծառայում է հիմնարար շահի, որը չի կարող իրականացվել սահմանափակումների բացակայության պայմաններում: Այսպիսով՝ այս կամ այն կոնկրետ սահմանափակման կիրառման ժամանակ համաչափության հարցը պահանջում է հաշվի առնել մի շարք գործոններ՝ իրավունքի բնույթը, սահմանափակման նպատակի կարևորությունը, սահմանափակման բնույթն ու ծավալները, սահմանափակման և դրա նպատակի միջև եղած կապը, նպատակին հասնելու սահմանափակման ավելի սեղմ միջոցների առկայությունը:

*Օրինականության սկզբունք*

Օրինականության սկզբունքն իրավական պետության հենասյուներից է: Եթե երկրում իշխանությունն իրականացվում է ոչ թե իրավաչափորեն, այլ կամայականորեն, ապա մյուս սկզբունքների պահպանումն իմաստազրկվում է, իսկ տվյալ պետությունը ոչ թե «մի մասով», այլ ընդհանրապես հակաիրավական և հակաժողովրդավարական է դառնում[19]: Օրինականության սկզբունքն օրենքով կարգավորվող հարաբերություններում կոնկրետացնում է ՀՀ և ՌԴ սահմանադրություններում ամրագրված իրավական պետության սկզբունքը, ինչպես նաև իրավական պետության սկզբունքից ածանցվող այն դրույթը, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Այսպիսով՝ օրինականության սկզբունքը նշանակում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրենց գործունեությունում ազատ չեն և կապակցված են իրավունքով և օրենքով: Այդ կապն իր դրսևորումն է ստանում երկու ձևով՝ օրենքի գերակայություն և օրենքի վերապահում: Օրենքի գերակայությունը նշանակում է, որ պետական մարմնի ոչ մի իրավական ակտ, գործողություն կամ անգործություն չպետք է հակասի օրենքին: Օրենքի վերապահում նշանակում է, որ պետական մարմինը որևէ լիազորություն իրականացնելիս պետք է լիազորված լինի օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքում նաև այլ իրավական ակտով: Օրինականության սկզբունքը ցանկացած հիմնական իրավունքի և ազատության, այդ թվում նաև՝ միավորման իրավունքի համար չափազանց կարևոր է: Այս սկզբունքի պահպանումը կարևորվում է իրավունքները և ազատությունները սահմանափակելիս:

Իրավական պետությունում հիմնական իրավունքի կամ ազատության ցանկացած սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով: Սակայն օրենքով նախատեսված լինելու պահանջը չի նշանակում զուտ ձևական ամրագրում օրենքում, իրավունքի միջամտությունը պետք է ոչ միայն ուղղակի սահմանված լինի օրենքով, այլ նաև որոշակի պահանջներ ներկայացնի սահմանափակող օրենքի որակին, համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին:

ՀՀ սահմանադրական դատարանը 2006թ.



www.lawinstitute.am

ապրիլի 18-ի ՍԴՈ 630 որոշման 11-րդ կետում նշել է.

*« Որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին»:*

ՌԴ սահմանադրական դատարանը նույնպես անդրադարձել է իրավական նորմի անորոշության անթույլատրելիությանը[20]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) բազմիցս նշել է, որ օրենքով նախատեսված լինելու պահանջը նշանակում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքին միջամտությունը պետք է ոչ միայն ուղղակի սահմանված լինի օրենքով, այլ նաև որոշակի պահանջներ ներկայացնի սահմանափակող օրենքի որակին: Օրենքը պետք է պատշաճ կերպով մատչելի լինի քաղաքացու համար, համապատասխան հանգամանքներում հնարավորություն ընձեռի քաղաքացուն կողմնորոշվելու, թե անհրաժեշտության դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվելու, բացի այդ օրենքի ցանկացած սահմանափակող նորմ պետք է ձևակերպված լինի բավարար ճշգրտությամբ, որպեսզի քաղաքացին հնարավորություն ունենա կանխատեսել այն հնարավոր հետևանքները, որոնք կարող են առաջանալ որոշակի հանգամանքներում[21]: Սակայն միաժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ սահմանադրական դրույթներն իրենց ընդհանուր բնույթի պատճառով կարող են լինել ոչ այնքան հստակ, որքան այլ օրենսդրական ակտերը[22]:

Այսպիսով՝ Եվրոպական դատարանը պահանջում է, որ ներպետական օրենքը շահագրգիռ անձանց համար իր որակով լինի մատչելի և հետևանքներով կանխատեսելի: Իհարկե, Եվրոպական դատարանն ընդունում է, որ օրենքները հնարավոր չէ բացարձակ ճշգրտությամբ ձևակերպել, սակայն եթե օրենքը մատչելիության և կանխատեսելիության առումով այնքան անկատար է, որ չի նախատեսում նվազագույն պաշտպանություն կամայականությունից, ապա նման օրենքի հիման վրա կատարված սահմանափակումը չի կարող համապատասխանել օրենքով նախատեսված լինելու պահանջին: Օրենքը պետք է բավարար չափով հստակ լինի, որպեսզի անհատը հնարավորություն ունենա գնահատելու՝ արդյոք իր վարքագիծը կհանգեցնի օրենքի խախտման, և նախատեսի նման խախտման հնարավոր հետևանքները: Որքան օրենսդրությունը կոնկրետ է, այնքան այնտեղ օգտագործվող լեզուն պետք է ճշգրիտ լինի: Օրենսդրության մեջ հստակ սահմանումների ներմուծումը շատ կարևոր է օրենքի հեշտ ըմբռնման ու կիրառման համար: Այսպիսով՝ սահմանումները պետք է լինեն ոչ շատ բարդ, ոչ շատ ընդհանուր ձևակերպումներով: Չնայած որոշակիության սկզբունքը չի պահանջում անպայմանորեն միավորվելու իրավունքի կարգավորմանն ուղղված մեկ միասնական օրենքի ընդունման անհրաժեշտություն, սակայն պահանջում է միավորվելու իրավունքը կարգավորելու համար վկայակոչվող տարբեր օրենքների միջև հետևողականության պահպանում և հակասությունների բացառում: Միավորվելու իրավունքը կարգավորող ցանկացած օրենք չպետք է կրկնի այլ օրենքում արդեն գոյություն ունեցող դրույթները, որպեսզի օգնի ապահովելու իրավական դաշտի ընդհանուր հետևողականությունն ու թափանցիկությունը:

*Խտրականության արգելման սկզբունք*

Միավորվելու իրավունքը պետք է հավասարապես իրականացվի յուրաքանչյուրի կողմից: Առանց որևէ խտրականության մարդու իրավունքների կիրառման սկզբունքն ընկած է մարդու իրավունքների չափանիշների մեկնաբանման հիմքում: ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը և ՌԴ Սահմանադրության 19-րդ հոդվածը պահանջում են, որ առանց որևէ խտրականության ապահովվի բոլոր անձանց սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացումը:

Խտրականության արգելման սկզբունքին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանը 04.04.2010թ. ՍԴՈ-881 որոշման 3-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

*«Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից»:*

Խտրականության արգելման սկզբունքին անդրադարձել է նաև ՌԴ սահմանադրական դատարանը[23]:

Խտրականության արգելման սկզբունքին անդրադարձել են նաև մարդու իրավունքներին վերաբերող մի շարք հեղինակավոր միջազգային

www.lawinstitute.am

փաստաթղթեր: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ ՔՔԻՄԴ) 26-րդ հոդվածը և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա ) 14-րդ հոդվածը պահանջում են, որ պետք է ապահովվի, առանց որևէ խտրականության, բոլոր անձանց սույն պայմանագրերով ճանաչված իրավունքների իրականացումը:

Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը չի նախատեսում խտրականության բացառումը որպես առանձին իրավունք, այլ դիտում է այն որպես Եվրոպական կոնվենցիայի մյուս հիմնարար դրույթներին և դրան կից արձանագրություններին լրացում:

Իսկ ահա արդեն Եվրոպական կոնվենցիայի 12-րդ արձանագրությունն արգելում է խտրականության որևէ դրսևորում:

Եվրոպական կոնվենցիայի 12-րդ արձանագրություն, Հոդված 1. Խտրականության ընդհանուր արգելումը

*1. Օրենքով սահմանված որևէ իրավունքի իրականացումը պետք է ապահովվի առանց որևէ խտրականության դրսևորման՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ կարծիք ունենալուց, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնություններին պատկանելուց, գույքային, ծննդյան և այլ վիճակներից:*

*2. Ոչ մեկի նկատմամբ որևէ պետական իշխանության կողմից 1-ին կետում նշված հիմքերից որևէ մեկով չպետք է կիրառվի խտրականություն:*

ՔՔԻՄԴ-ի 26-րդ հոդվածը երաշխավորում է բոլոր անձանց հավասարությունն օրենքի առջև և օրենքով հավասար պաշտպանվածության իրավունքը:

Սա ենթադրում է, որ միավորվելու իրավունքին վերաբերող իշխանությունների կայացրած որոշումները չպետք է ունենան խտրական ներգործություն, ուստի և՛ ուղղակի, և՛ անուղղակի խտրականությունն արգելվում է:

Արգելվում է խտրականությունը սեռական կողմնորոշման հիմքով: Ամստերդամի պայմանագրի 13-րդ հոդվածը նաև սահմանում է, որ Եվրոմիությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ գործողություններ՝ պայքարելու «...սեռական կողմնորոշմանն ուղղված խտրականության դեմ», իսկ Հիմնարար իրավունքների Եվրոպական Միության խարտիայի 21(2)-րդ հոդվածը արգելում է ցանկացած խտրականություն ցանկացած հիմքով,ներառյալ՝ սեռական կողմնորոշման հիմքի վրա:

Մեկ ռասայական խմբի կողմից միավորումներ կազմելը բացառելու միտումնավոր ուղղված փորձերը, որոնք իրականացվում են հիմնականում այլ ռասայական խմբերի կողմից բնակեցված տարածքներում, կարող է հանգեցնել մեկուսացման (սեգրեգացիայի), ուստի հակասության մեջ կմտնի խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ: Խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածը հաստատում է, որ «կողմերը մասնավորապես դատապարտում են ռասայական սեգրեգացիան և ապարտեիդը և ձեռնարկում միջոցներ իրավասության տակ գտնվող տարածքներում կանխելու, արգելելու և արմատախիլ անելու նմանատիպ բնույթ ունեցող բոլոր գործելաոճերը»:

Եվրոպայի խորհրդի Փոքրամասնությունների մասին շրջանակային կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է, որ Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի խաղաղ հավաքներ անցկացնելու, միավորումներ կազմելու, արտահայտվելու, մտքի, խղճի և դավանանքի ազատությունը: ՄԱԿ-ի Ազգային, էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնությունների մասին հռչակագրի 3(1}-րդ հոդվածը սահմանում է, որ փոքրամասնություններին պատկանող անձինք առանց որևէ խտրականության կարող են իրականացնել իրենց իրավունքը «... անհատապես, ինչպես նաև համայնքով իրենց խմբի այլ անդամների հետ»:

Մարդու իրավունքների ոլորտում միջազգային փաստաթղթերը պահանջում են, որ տվյալ պետության քաղաքացիություն չունեցող անձինք օգտվեն միավորվելու իրավունքից: Հետևաբար կարևոր է, որ օրենքը տարածվի ոչ միայն տվյալ պետության քաղաքացիների, այլ նաև ապատրիդների, փախստականների, օտարերկրյա քաղաքացիների, ապաստան որոնողների, միգրանտների և զբոսաշրջիկների վրա: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ՄԻԵԿ 16-րդ հոդվածը սահմանում է, որ «ոչինչ չի կարող խոչընդոտել Բարձր պայմանավորվող կողմերին սահմանափակումներ նախատեսել օտարերկրացիների քաղաքական գործունեու-

www.lawinstitute.am

թյան համար»:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի (ԿՆ ՎԿ) 3-րդ հոդվածը սահմանում է, որ կողմերը պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ապահովելու կանանց ամբողջական զարգացումն ու առաջխաղացումը, որի նպատակն է տղամարդկանց հետ համահավասար երաշխավորել նրանց իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումը:

Չափահասների նման երեխաները նույնպես ունեն պահանջներ և շահեր: Միավորվելու իրավունքը նրանց համար ապահովում է իրենց տեսակետներն արտահայտելու և հասարակական կյանքում իրենց ներդրումն ունենալու հնարավորություն:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն.

*1. Մասնակից պետությունները ճանաչում են Երեխայի միավորումների և խաղաղ հավաքների ազատության իրավունքը:*

*2. Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի այնպիսիներից, որոնք սահմանվում են օրենքի համաձայն և ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ են ի շահ ազգային անվտանգության կամ հանրության ապահովության, հասարակական կարգի պահպանման, բնակչության առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:*

Հաշվի առնելով միավորումների առանձնահատկությունները՝ համապատասխան օրենքը միավորումներ կազմելու համար կարող է սահմանել որոշակի նվազագույն տարիքային շեմ՝ երեխայի զարգացող կարողությունների հանդեպ պատշաճ հարգանք տածելով հանդերձ:

Համաձայն միջազգային չափանիշների՝ հոգեկան և ֆիզիկական հիվանդություն ունեցող յուրաքանչյուր անձ պետք է իրավունք ունենա իրականացնելու իր բոլոր քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ճանաչված են ՔՔԻՄԴ և համապատասխան այլ գործիքների կողմից: ՄԱԿ-ի Հաշմանդամների իրավունքների մասին կոնվենցիան նմանապես շեշտում է բոլոր հաշմանդամների մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման, պաշտպանության և դրանց լիարժեք և հավասար իրականացման անհրաժեշտությունը:

*Լավ վարչարարություն սկզբունք*

Որպես հիմնարար իրավունք՝ միավորման իրավունքը, այնքանով, որքանով հնարավոր է, պետք է իրականացվի առանց կարգավորման: Այն, ինչը հստակորեն չի արգելվում օրենքով, պետք է ենթադրվի որպես թույլատրելի, և նրանք, ովքեր ցանկանում են իրացնել միավորվելու իրավունքը, չպետք է թույլտվություն պահանջեն այդ անելու համար: Հօգուտ միավորվելու իրավունքի կանխավարկածը պետք է հստակորեն սահմանվի օրենքով:

Պետության պարտավորությունն է կիրառել համապատասխան մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք չեն ստեղծի անհարկի բյուրոկրատական քաշքշուկներ և գործնականում կապահովեն միավորման իրավունքի իրականացումը: Պետությունը դրական պարտավորություն ունի ակտիվորեն պաշտպանելու միավորման իրավունքը, և դա պետք է հստակ ձևակերպում ստանա միավորման իրավունքին վերաբերող ցանկացած օրենսդրական ակտում: Այս դրական պարտավորությունը պահանջում է, որ պետությունը միավորման իրավունքից օգտվողներին պաշտպանի ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից և նրանց պաշտոնատար անձանցից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից, որոնք կփորձեն որևէ կերպ խանգարել կամ խոչընդոտել միավորման սահմանադրական իրավունքի գործնականում իրացմանը:

Ռուսական և հայրենական իրավաբանական գրականության մեջ, կարևորելով դատարանի մատչելիությունը, խոսելով դատարանի մատչելիության սկզբունքի մասին, հաճախ մոռացության են մատնվում կամ երկրորդական պլան են մղվում վարչական մարմին-քաղաքացի հարաբերությունները: Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության համար դատական համակարգի կայուն և հետևողական զարգացումը կարևոր է, բայց ոչ բավարար, պետք է կատարելագործվեն նաև վարչական մարմինների համակարգը և գործելաոճը:

Վարչարարության բազմաթիվ սահմանումներ գոյություն ունեն, ՀՀ օրենսդիրը նույնպես տվել է վարչարարության իր սահմանումը: Չցանկանա-

www.lawinstitute.am

լով մանրամասն անդրադառնալ վարչարարության տարբեր սահմանումներին՝ ուղղակի կփորձենք արտացոլել վարչարարության բուն իմաստը: Վարչարարությունը վարչական մարմնի՝ դրանից դուրս գտնվողներին ուղղված գործունեությունն է[24]:

Կարևորելով լավ վարչարարության նշանակությունն իրավական պետության և ժողովրդավարական հասարակության կայացման գործում՝ Եվրամիության Հիմնարար իրավունքների խարտիայի 41-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի պատշաճ վարչական կառավարման իրավունք:

Հոդված 41, Եվրամիության Հիմնարար իրավունքների խարտիայի 7-րդ հոդվածի համաձայն.

*«1. Յուրաքանչյուր անձ Եվրամիության հաստատությունների և մարմինների հետ հարաբերվելիս ունի ողջամիտ ժամանակահատվածում անկողմնակալ, արդար վերաբերմունք ստանալու իրավունք:*

*2. Այդ իրավունքը ներառում է.*

*ա. յուրաքանչյուր անձի լսված լինելու իրավունքը, նախքան նրա նկատմամբ կկիրառվի որևէ միջոց, որ անբարենպաստ ազդեցություն կունենա նրա վրա,*

*բ. յուրաքանչյուր անձի՝ իր մասին տեղեկատվության մատչելիությունն ապահովելու իրավունքը՝ հարգելով հանդերձ կոնֆիդենցիալության, մասնագիտական և գործարար գաղտնիության օրինական շահերը,*

*գ. իշխանությունների կայացրած որոշման պատճառաբանությունը ներկայացնելու պարտականությունը »:*

Մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները գործնականում արդյունավետ իրացնելու և պաշտպանելու համար շատ կարևոր է լավ վարչարարության երաշխիքներ ապահովող օրենսդրության առկայությունը: Այդ օրենքները պետք է կիրառվեն միավորվելու իրավունքը կարգավորելիս:

Լավ վարչարարության համար չափազանց կարևոր են վարչարարության հրապարակայնությունը և ընթացակարգային թափանցիկությունը:

Հանրությունը պետք է տեղեկացված լինի, թե որ մարմինն է պատասխանատու միավորման իրավունքի իրացման պաշտպանության հետ կապված որոշումներ կայացնելու համար, և դա հստակորեն պետք է ամրագրվի օրենքում: Այդ մարմինները պետք է ապահովեն հասարակության համար միավորվելու իրավունքի վերաբերյալ համապատասխան հուսալի տեղեկատվության մատչելիությունը: Ընթացակարգային թափանցիկությունն ուղղված է առաջին հերթին միավորվելու իրավունքի երևակայական ռիսկերի հիման վրա սահմանափակման բացառմանը:

Այսպիսով՝ միավորվելու իրավունքի իրացմանը վերաբերող օրենսդրական ակտերը պետք է հստակ ուրվագծեն այն կարգավորիչ ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ են միավորվելու իրավունքը գործնականում իրականացնելու համար:

Լավ վարչարարության երաշխիքներ ապահովող օրենսդրության ստեղծման հետ կապված՝ ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետությունում կատարվել են կոնկրետ քայլեր. ընդունվել է վարչական մարմին-քաղաքացի հարաբերությունները կարգավորվող ընդհանուր օրենք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը: Ռուսաստանի Դաշնությունում նույնպես անհրաժեշտ է ընդունել լավ վարչարարության երաշխիքներ պարունակող օրենսդրություն:

*Իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունք*

Միավորման իրավունքի վերոնշյալ սկզբունքները հիմնականում ուղղված են հանրային իշխանության մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց, իսկ իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքն ուղղված է սուբյեկտիվ իրավունքի կրողներին:

Անձանց պատկանող իրավունքների ազատ իրացման սկզբունքը չի կարող դիտարկվել որպես իրավունքների անսահման օգտագործման հնարավորություն[25]: Իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը բխում է մարդու իրավունքների «ոսկե կանոնից», որը, ելնելով Ավետարանից, ձևակերպել է ուշ միջնադարյան բնական իրավունքների տեսությունը. «Մի արա այն, ինչ չես ուզում, որ քո նկատմամբ անեն ուրիշները»[26]: Ինչպես և մյուս իրավունքների դեպքում, միավորման սահմանադրական իրավունքի չարաշահումն անթույլատրելի է:

Պատմության ընթացքում իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքի էությանը շատերն են անդրադարձել: Խոսելով

www.lawinstitute.am

իրավունքի էության մասին՝ դեռևս հռոմեական դասական Ուլպիանը գրել է. «Իրավունքի նշանակությունն այսպիսին է՝ ապրել ազնիվ, չվնասել ուրիշին, յուրաքանչյուրինը տալ իրեն»: Կանտյան կատեգորիկ իմպերատիվում ազատությունն իրավական ոլորտում հանդես է գալիս հետևյալ բովանդակությամբ. «Արտաքնապես վարվիր այնպես, որ քո կամայականության ազատ դրսևորումը համատեղելի լինի համընդհանուր օրենքին համապատասխանող յուրաքանչյուրի ազատության հետ»:

Իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող առաջին փաստաթղթերում: Դեռևս 1789 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հռչակագրի 4-րդ հոդվածում նշվել է, որ ազատությունն ամեն ինչ անելու հնարավորությունն է, ինչը չի վնասում մյուսներին:

Իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև մարդու իրավունքներին վերաբերող մի շարք հեղինակավոր միջազգային փաստաթղթերում:

Եվրոպական կոնվենցիայի «Իրավունքների չարաշահման արգելում» վերտառությամբ 17-րդ հոդվածում նշվում է, որ սույն կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացման կամ դրանց սահմանափակման՝ ավելի մեծ չափով, քան նախատեսված է կոնվենցիայով:

Իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքն օտար չէ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության իրավական համակարգերին:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը Հայաստանի Հանրապետությունը հռչակում է որպես իրավական պետություն, նույնն է անում նաև ՌԴ Սահմանադրության 1-ին հոդվածը: Իրավական պետության գաղափարը ներառում է մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնցից է նաև իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը: Այսինքն՝ իրավական պետություն լինելն արդեն նախատեսում է այս սկզբունքի առկայությունը, քանի որ անձանց վերապահված իրավունքների իրականացումը սահմանափակված է այլ սահմանադրական արժեքներով, այդ թվում նաև՝ այլ անձանց իրավունքներով և ազատություններով:

Իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքն արտացոլված է նաև ՀՀ Սահմանադրության 47-րդ և 42-րդ և ՌԴ Սահմանադրության 17-րդ հոդվածներում: ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը», իսկ 42-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի կատարելու այն, ինչ արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները: ՌԴ Սահմանադրության 17-րդ հոդվածի 3-րդ կետում ուղղակի նշված է. «Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացումը չպետք է խախտի այլ անձանց իրավունքներն ու ազատությունները»:

«Իրավունքի չարաշահման» հիմնախնդիրն արդեն վաղուց ուշադրության կենտրոնում է ինչպես տեսության մեջ, այնպես էլ պրակտիկայում: «Իրավունքի չարաշահման» հիմնախնդրին հատկապես մեծ ուշադրություն են դարձնում դատավարագիտությունում: Դատավարական իրավունքների չարաշահման վտանգի և դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքի և համապատասխան կարգավորումների անհրաժեշտության մասին խոսում են իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի և դատավարագիտության տարբեր ներկայացուցիչներ[27]:

Չնայած «իրավունքի չարաշահման» հիմնախնդրին ուղղված ուշադրությանը, մինչ այժմ իրավունքի չարաշահման միատեսակ հասկացություն մշակված չէ, մինչև վերջ պարզ չէ, թե, այնուամենայնիվ, ինչ է իրավունքի չարաշահումը և ընդհանրապես իրավունքի չարաշահում հնարավոր է, թե՝ ոչ:

Իրավաբանական գրականության մեջ տարբեր հեղինակներ տալիս են իրավունքների չարաշահման հասկացության տարբեր սահմանումներ, նրանց պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբի:

Առաջին խմբի հեղինակներն իրավունքի չարաշահումը սահմանում են որպես սուբյեկտիվ իրավունքի իրականացում՝ ի հակադրություն բարի

կամքին, բարոյականությանը[28]: Երկրորդ խմբի հեղինակներն իրավունքի չարաշահումը սահմանում են որպես սուբյեկտիվ իրավունքի իրականացում՝ ի հակադրություն այլոց իրավունքների և օրինական շահերի[29]: Երրորդ խմբի հեղինակներն իրավունքի չարաշահման համընդհանուր սահմանումն անհնարին են համարում՝ նշելով, որ իրավունքի չարաշահումն ավելի շատ ձգտում է դեպի կոնկրետ իրավիճակը, այլ խոսքով՝ դատարանն ամեն կոնկրետ դեպքում է որոշում ինչ է իրավունքների չարաշահում[30]:

Մեզ համար անընդունելի է առաջին խմբի հեղինակների մոտեցումը, որոնք իրավունքի չարաշահումը նույնացնում են բարոյական նորմերի խախտման հետ: Իրավունքի չարաշահումն իրավական կատեգորիա է և չպետք է այն նույնացնել զուտ բարոյական նորմերի խախտման հետ: Կարծում ենք նաև, որ իրավունքի չարաշահումը պետք է առաջացնի կոնկրետ իրավական անբարենպաստ հետևանքներ այն չարաշահողի համար, այլ ոչ թե ինչպես բարոյական նորմերի խախտման դեպքում միայն համընդհանուր պարսավանք առաջացնի: Թեև ընդունում ենք երրորդ խմբի հեղինակների մոտեցումը, որ դատարանն է ամեն կոնկրետ դեպքում որոշում՝ եղել է արդյոք իրավունքների չարաշահում թե ոչ, սակայն չենք կարծում, որ սա բացառում է իրավունքի չարաշահման համընդհանուր սահմանման հնարավորությունը:

Մեզ համար ընդունելի են երկրորդ խմբի հեղինակների մոտեցումները: Իրավունքի իրականացումը չի կարող հակաիրավական լինել: Իրավունքի չարաշահումը գործնականում իրավունքի այնպիսի իրացումն է, որն ուղղված է կամ գործնականում խոչընդոտում է այլոց իրավունքների և օրինական շահերի իրականացմանը:

Իրավական պետության գաղափարից, ինչպես նաև ՀՀ և ՌԴ սահմանադրությունների՝ մեր կողմից վկայակոչված նորմերից բխում է, որ անձանց վերապահված իրավունքների իրականացումը սահմանափակված է այլ անձանց իրավունքներով և օրինական շահերով: Եթե անձն օժտված է որոշակի իրավունքներով և դրանք իրականացնում է այնպես, որ խախտվում են այլ սուբյեկտների իրավունքները, ապա դա իրավունքների չարաշահում է, ուստի և անընդունելի է իրավական պետությունում: Այսինքն՝ անձանց վերապահված իրավունքների իրականացումը սահմանափակված է նրանց հակակշռող սահմանադրական արժեքներով, այդ թվում նաև՝ այլոց իրավունքներով և ազատություններով:

Ամփոփելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է նշել, որ միավորվելու իրավունքին վերաբերող օրենսդրության մշակման, մեկնաբանման և կիրառման բոլոր փուլերում առանձնահատուկ ուշադրության պետք է արժանանան այս սկզբունքները: Իսկ սրանց էության և բովանդակության անտեսման դեպքում չի կարող ամբողջովին երաշխավորվել միավորվելու սահմանադրական իրավունքի գործնականում արդյունավետ իրականացումը:

---

[1] Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1980, 4-րդ հատոր, էջ 310:
[2] Տե՛ս Խրոպղնյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 258:
[3] Տե՛ս Stone Sweet, Jud Mathews. Poportionality balancing and global constitutionalism. 47 volume, 2008.
[4] Տե՛ս Margherita Poto. The principle of proportionality in comparative perspective. 2007.
[5] Տե՛ս Mads Andenas, Stefan Zleptnig. Proportionality, in comparative perspective. 2007.
[6] Տե՛ս Stone Sweet, Jud Mathews. Poportionality balancing and global constitutionalism. 47 volume, 2008.
[7] Տե՛ս Aristotle. Nicomachean Ethics. book, chs. 10-12.
[8] Տե՛ս Aristotle. Nicomachean Ethics. book 5.
[9] Տե՛ս http://oll.libertyfund.org.
[10] Տե՛ս Thomas Aquinas. Summa Theologica, Treatise on law, Henry Regney co. 1965. p. 81-82.
[11] Տե՛ս http://oll.libertyfund.org.
[12] Տե՛ս Stone Sweet, Jud Mathews. Poportionality balancing and global constitutionalism. 47 volume, 2008.
[13] Տե՛ս Susanne Baer. Equality. The jurisprudence of German constitutional court. 5 colum, 1999. p. 261-264.
[14] Տե՛ս U.S Constt. Eight amendment. Proprtionality and the changing meaning of punishments. 122 Harvard, 2009.
[15] Տե՛ս Anchitell Gray. Debates of the House of Commons. 1763. p. 844-847.
[16] Տե՛ս Magna Charta. at http:// legal-dictionary.thefreedictionary.com:
[17] Տե՛ս Постановление Конституционного Суда РФ от 12 марта 2001 г. N 4-П, Постановление Конституционного Суда РФ от 16 июля 2007 г. N 11-П.

[18] Տե՛ս Feldman. Civil Liberties and Human rightsin England and Wales. Oxford. Oxford University Press. Oxford 2002.2end edition.
[19] Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վերաբերյալ, Երևան, 2007, էջ 23:
[20] Տե՛ս Постановление Конституционного Суда РФ от 6 апреля 2004 г. N 7-П.
[21] Տե՛ս Sunday Times v. United Kingdom. Judgment of 26 April 1979.
[22] Տե՛ս Rekvenyi v.Hungary. Judgment of 20 may1999.
[23] Տե՛ս Постановление Конституционного Суда РФ от 24 октября 2000 г. N 13-П.
[24] Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վերաբերյալ, Երևան, 2007, էջ 21:
[25] Տե՛ս Кузьмина М. Н. Юридический конфликт: Теория и практика разрешения. Москва, 2008. С. 199.
[26] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ: Երևան, 2010, էջ 494:
[27] Տե՛ս Гаджиев Г. А. Конституционные принципы добросовестности и недопустимости злоупотребления субъективными правами. Государство и право. 2002. № 7. С. 54-62; Хмель М.М. Принцип недопустимости злоупотребления правом (теоретико-правовые аспекты): Автореф. дис... канд. юрид. наук. 2005; Зайцева С. Г. “Злоупотребление правом” как правовая категория: Вопросы теории и практики. Автореф. дисс. … канд. юрид. наук. Волгоград, 2003; Дурново Н. А. Злоупотребление правом как особый вид правового поведения (Теоретико-правовой анализ). Автореф. дисс. … канд. юрид. наук, Шебанова Н. А. Злоупотребление процессуальными правами. Арбитражная практика. 2002. № 5; Малиновский А. А. Недопустимость злоупотребления правом как общеправовой принцип. Право и политика. № 9. 2006.
[28] Տե՛ս Лейст О. Э. Три концепции права. Советское государство и право. 1991, N12; Яблоков Т.М. Суд правый, милостливый К.Р. 1914. Дом Волощенко. С.1; Малиновский А.А. Злоупотребление правом. М., 2000. С. 13.
[29] Տե՛ս Курбатов А.Я. Недопустимость злоупотребления правом как способ установления пределов реализации (удовлетворения) интересов. озайство и право. 2000. N 12. С. 44; Маленина М.Н. Личные неимущественные права граждан. Понятие, осуществление, защита. Москва, 2001. С. 36; Грибанов В.П. Пределы осуществления и защиты гражданских прав. Москва, 1972. С.71.
[30] Տե՛ս Яценко Т.С. Категория шиканы в гражданском праве: история и современность. Москва, 2003. С. 80.

## РЕЗЮМЕ

***Принципы конституцонного права на объединение в Республике Армения и в Российской Федерации***

Статья посвящена принципам конституцонного права на объединение. Автор отмечает, что принципы конституционного права на объединение - это общие исходные положения, на основе которых должно проводится становление, толкование и применение законодательства, связанного с правом на объединение. Право на объединение должно быть воплощено в жизнь в соответствии с данными принципами.

В данной статье, автор, не претендуя на то, чтобы дать исчерпывающий перечень принципов конституционного права на объединение, рассматривает такие принципы конституционного права на объединение, как принцип соразмерности, законности, запрета дискриминации, надлежащего административного регулирования и недопустимости злоупотребления правом.

## SUMMARY

***The principles of the constitutional right of association in the Republic of Armenia and Russian Federation***

This article is devoted to the principles of constitutional right of association. The author notes that the principles of the constitutional right of association are general assumptions, on which the formation, interpretation and application of the legislation related to the right of association should be carried out. The right of association must be realized in accordance with these principles.

In this article the author does not try to give a complete list of principles of the constitutional right of association, considering only such principles of the constitutional right of association, as the principle of proportionality, principle of legality, the principle of non-discrimination, good administration and the principle of abuse of rights.

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԼՈԲԱԼ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում ինտեգրման շարժումն ուղեկցվում է գլոբալացման գործընթացներով, որոնք բազմաթիվ երկրների համար վերածվել են «զրոյական ինտեգրման»: Ընդ որում, գլոբալացումը ավելի հստակ դրոշմ է թողում ինտեգրման բնույթի ու տեմպերի վրա, ինչը ամենաարդյունավետ միջոցն է գլոբալացման առավելությունների օգտագործման և նրա բացասական հետևանքների չեզոքացման համար:

Հետխորհրդային տարածքում նույնպես բարձրանում է անվտանգության ընդհանուր տարածության ձևավորման հրատապությունը: Հայաստանը, ԱՊՀ և ՀԱՊԿ այլ պետությունները գտնվում են գլոբալացման երկու բևեռների՝ Արևմտյան Եվրոպայի և Արևելյան Ասիայի միջև: Դա ենթադրում է ոչ թե մեկուսացվածություն, այլ այդ հետխորհրդային կազմակերպությունների համագործակցությունը արտաքին ռազմաքաղաքական միջավայրի հետ: Սակայն նախ և առաջ ֆինանսատնտեսական հզորությունների տարբերության պատճառով գլոբալացման տարբեր սուբյեկտների միջև համագործակցությունը հաճախ ասիմետրիկ բնույթ է ձեռք բերում, հանգեցնում է յուրահատուկ գաղափարախոսությունների ձևավորման, երբ գլոբալացումը նոր քաղաքական լծակներ է առաջադրում պետությունների ճնշման համար: Միաժամանակ գլոբալացման բարիքներից զրկված պետությունները կամ քաղաքական ուժերը ահաբեկչության և ծայրահեղականության դրսևորման սնուցող միջավայր են հանդիսանում: Այստեղից էլ բխում է անվտանգության տնտեսական բաղադրիչի կարևորությունը[1]:

Երբ միջուկային բախման հավանականություն չկա և միջուկային գերտերությունների միջև հարաբերությունները փոխադրել են համագործակցության ոլորտ, սպառնալիքների ծանրությունը տեղափոխվել է տարածաշրջանային մակարդակ: Միևնույն ժամանակ չի կարելի թերագնահատել տեղական կամ տարածաշրջանային հակամարտությունների էսկալացիայի հավանականությունը, հատկապես նոր մարտահրավերների ու սպառնալիքների դրսևորման պայմաններում: Ահաբեկչության սպառնալիքը և ծայրահեղականության այլ դրսևորումները արտահայտվում են աշխարհի տարբեր ծայրերում: Ողջ աշխարհի համար հատկապես վտանգ է ներկայացնում միջազգային ահաբեկիչների՝ զանգվածային ոչնչացման զենքի մատչելիության ձգտումը: Ջ. Թենեթի խոսքերով. «Բեն Լադենի կազմակերպությունը միայն մեկն է այն ահաբեկչական կազմակերպություններից, որոնք հետաքրքրություն են ցուցաբերել քիմիական, բակտերիոլոգիական, ռադիոակտիվ և միջուկային զենքի նկատմամբ և արդեն ստացել են այն»[2]:

Ինչպես նշել է ՌԴ նախագահ Վ.Վ. Պուտինը. «Աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները ապացուցում են Ռուսաստանի կողմից Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ստեղծման օգտի ընտրության ճշտությունը և պատեհաժամությունը: Չէ որ մեզանից անմիջական հեռավորության վրա կան իրական վտանգների՝ ահաբեկչության, վերազգային հանցագործության, թմրանյութերի ինտերվենցիայի առաջացման բազմաթիվ աղբյուրներ: Բացի այդ, ՀԱՊԿ մեր գործընկերների հետ մենք պետք է ապահովենք նախկին Խորհրդային միության զգալի մասի կայունությունը և անվտանգությունը»[3]: Ընդ որում ռուսական ղեկավարությունը ազգային շահերի պաշտպանության կամ իր դաշնակցային պարտավորությունների կատարման համար չի բացառում կանխարգելիչ հարվածների հասցնելը:

Հավաքական անվտանգության համակարգը, որը ձևավորվել է ՀԱՊԿ շրջանակներում, հետապնդում է նրանում մասնակցող պետություննե-

www.lawinstitute.am

րի շահերին, տարածաշրջանային և միջազգային անվտանգությանն ու կայունությանը սպառնացող ինչպես դասական, այնպես էլ նոր, գլոբալացման պայմաններում ավելի վտանգավոր և տեխնոլոգիական տեսակետից ավելի հագեցած դարձող սպառնալիքների դիմակայման ու չեզոքացման նպատակ[4]:

Խաղաղության տեսանկյունից ԱՊՀ ջանքերի հետ միասին կարևոր դեր է խաղում նաև ՀԱՊԿ-ը, որը սեփական օպերացիաների իրականացման ժամանակ պետք է մանրամասն ուսումնասիրի միջազգային անվտանգության ոլորտում գործող կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և այլն, ինչպես դրական, այնպես էլ բացասական փորձը: Այստեղ առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնել հետխորհրդային տարածքում հակամարտությունների վիճակին, որտեղ ՀԱՊԿ-ի ակտիվության բացակայությունը նրանից որոշ անդամ պետությունների դուրս գալու պատճառ դարձավ: Բնական է, որ այդ աշխատանքում նպատակահարմար է կիրառել բոլոր հնարավոր միջոցները՝ երկկողմանի հիմքի վրա ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի, այլ միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ:

Աշխարհում անկայուն իրավիճակը հաշվի առնելով՝ ուշադրության է արժանի ԵԱՀԿ-ի կողմից 21-րդ դարում անվտանգության և կայունության սպառնալիքներին համընդգրկուն հակազդեցության ցուցաբերման և գլոբալացման կառավարման միջազգային ռազմավարության մշակման նախաձեռնությունը, որը հավանության է արժանացել նաև ՀԱՊԿ անդամ պետությունների կողմից[5]:

Առաջնայնությունը տալով Ռուսաստանի հետ ռազմավարական համագործակցությանը և ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության զարգացմանը՝ Հայաստանը ձգտում է ընդլայնել իր կապերը ՆԱՏO-ի (չնայած չի պատրաստվում անդամակցել նրան՝ ի տարբերություն Վրաստանի և Ադրբեջանի), Եվրոպայի խորհրդի, այլ արևմտյան կազմակերպությունների հետ[6]:

Ժամանակակից միջազգային հարաբերությունների բնորոշ գիծ են հանդիսանում ինտեգրման գործընթացները, որոնք զարգանում են աշխարհի շատ տարածաշրջաններում վերջին տասնամյակների ընթացքում և ընդգրկում են միջպետական հարաբերությունների տարբեր ոլորտները: Այդ գործընթացներում մեծ դեր և նշանակություն ունեն միջազգային կազմակերպությունները: Այդպիսի միջազգային կազմակերպություններից մեկն է հանդիսանում Եվրոպական Միությունը: Այս միջազգային կազմակերպությունը առանձնապես ուշագրավ է, քանի որ հենց նա է հանդիսանում եվրոպական ընտանիքի հիմքը: Եվրոմիության հիմնական տարբերությունը մնացած միջազգային կազմակերպություններից առաջին հերթին կայանում է առաջադրված խնդիրների գլոբալ բնույթի և այդ խնդիրներին համակարգված լուծում տալու մոտեցումների մեջ:

Վերջին տասնամյակների ընթացքում աշխարհում ավելի ու ավելի են աշխուժացել ինտեգրացիոն գործընթացները, որոնք զարգանում են աշխարհի տարբեր տարածաշրջաններում և ընդգրկում են պետությունների միջև հարաբերությունների բազմաբնույթ ոլորտներ: Անշուշտ, այս գործընթացների զարգացման մեջ առանցքային դեր են խաղում միջազգային կազմակերպությունները, որոնք մեծապես նպաստում են պետությունների միջև համագործակցությանը՝ վերջիններիս ինքնիշխան իրավունքների իրականացման գործընթացում:

Ազգային պետությունների ինտեգրման համար ճանապարհ հարթելով դեպի վերպետական տնտեսական և քաղաքական միության՝ վերջին հաշվով եվրոպան ազգամիջյան կազմակերպության խոշոր կազմավորման բնույթ է ընդունում, որը դուրս է գալիս ազգայնականության ժամանակաշրջանին բնորոշ նեղ պատկերացումների և ապակառուցողական զգացմունքայնության շրջանակներից[7]: Եվրոպան այսօր իրենից ներկայացնում է բազում առումներով աշխարհի ամենակազմակերպված տարածաշրջանը: Քաղաքական միավորման ավելի բարձր աստիճանի հասնելու դեպքում այս տարածաշրջանում կարող է հաստատվել շուրջ կես միլիարդ մարդ միավորող միասնական մի խոշոր համակարգ, որն իր բնակչությանը կապահովի ժողովրդավարություն, մարդու իրավունքների պաշտպանություն և բարձր կենսամակարդակ: Որոշ փորձագետների կարծիքով նման Եվրոպան անխուսափելիորեն կդառնա համաշխարհային գերտերություն: Եվրոպան ծառայում է նաև որպես Եվրասիայի խորքերը ժողովրդավարության ծավալման համար ցատկահարթակ:

Եվրոպական Միությունը, ինչպես արդեն ասվել է, ավելին է քան երկրների համադաշնություն,

սակայն դաշնային պետություն չէ: Դա, փաստորեն, լիովին նոր և եզակի երևույթ է: Նրա քաղաքական համակարգը վերջին 50 տարիների ընթացքում անընդհատ զարգացում է ապրել, և հիմնված է մի շարք պայմանագրերի վրա՝ 1950-ական թթ. Փարիզում և Հռոմում ստորագրված մինչև 1990-ական թթ. Մաաստրիխտում, Ամստերդամում և Նիսում համաձայնեցված պայմանագրերը: Ըստ վերջիններիս՝ Միության անդամ-երկրները իրենց ազգային անկախության որոշակի մասը պատվիրակում են այն ինստիտուտներին, որոնց անդամ են իրենք, և որոնք ներկայացնում են ոչ միայն իրենց ազգային, այլև հավաքական շահերը:

Պայմանագրերը իրենցից ներկայացնում են այն, ինչը հայտնի է՝ որպես «առաջնային» օրենսդրություն: Նրանցից բխում է «երկրորդային» օրենսդրության մեծ մարմինը, որն ուղղակիորեն ներազդում է ԵՄ քաղաքացիների ամենօրյա կյանքի վրա: Այն հիմնականում բաղկացած է կանոնակարգերից, դիրեկտիվներից և հանձնարարականներից: Այս օրենքները, ընդհանրապես ԵՄ ընթացակարգերի հետ միասին, հանդիսանում են հետևյալ երեք հիմնական ինստիտուտների կողմից ընդունված որոշումների արդյունքը.

• ԵՄ խորհուրդ, որը ներկայացնում է անդամ-երկրները

• Եվրոպական խորհրդարան, որը ներկայացնում է քաղաքացիներին

• Եվրոպական հանձնաժողով, որը քաղաքականապես անկախ մարմին է և ներկայացնում է եվրոպական հավաքական շահերը:

Այս «ինստիտուցիոնալ եռանկյունը» կարող է գործել միայն այն դեպքում, երբ այդ երեք ինստիտուտները սերտորեն համագործակցում և վստահում են միմյանց: «Սույն պայմանագրին համապատասխան՝ իրենց առաջադրանքները կատարելու նպատակով, Եվրոպական խորհրդարանը, համագործակցելով խորհրդի և հանձնաժողովի հետ, պետք է կանոնակարգի, դիրեկտիվներ, որոշումներ ընդունի, ներկայացնի հանձնարարականներ կամ կարծիքներ» (Մաաստրիխտի պայմանագիր հոդ. 249)[8]:

Միջազգային ասպարեզում ուժերի հարաբերակցության փոփոխությունը խթանեց ինտեգրացիոն գործընթացները, ինչպես նաև անդամերկրների միջև տարբեր բնագավառներում ավելի սերտ համագործակցությանը: Եվրոպական պետությունները, այդ թվում նախկին խորհրդային հանրապետությունները ԵՄ-ին անդամակցելու ցանկություն հայտնեցին:

Խորհրդային միության փլուզման պահից Հարավային Կովկասը հայտնվել է նոր քաղաքական, տնտեսական և սոցիալական իրամայականների առջև: Թեև համակարգի տրանսֆորմացման տեմպերն ու արժեքներն ազգային պետություններից յուրաքանչյուրի համար տարբեր են եղել, այդուհանդերձ դրանք ներքին ու արտաքին մարտահրավերների առջև են կանգնեցրել ազգային քաղաքական գործիչներին: Որպես տարածաշրջանի ամենանշանակալի մարտահրավերներ, մնում են ուժեղ պետականության կառուցումը, արտաքին անվտանգության ապահովման համապարփակ միջոցառումների իրականացումը և կայուն տնտեսական զարգացման ապահովումը: Տարածաշրջանը բնորոշվում է էթնիկ հակամարտություններով, պատերազմներով, ժողովրդական արժեքների և կանոնների տարբեր ընկալումներով, թույլ տնտեսությամբ, համատարած կոռուպցիայով և այլ երևույթներով: Լայն առումով այսօրվա տարածաշրջանի ինքնության պարադոքսը այն է, որ այստեղ նվազ աշխարհագրական միասնությունն առավել աշխարհաքաղաքական բաժանվածություն է ենթադրում: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, պետք է ասել, որ Հայաստանը չէր կարող անտեսել կազմակերպության գործունեությունը և քայլեր չձեռնարկել նրա հետ հարաբերությունները խորացնելու ուղղությամբ: 1991 թվականին իր անկախությունը վերագտած ՀՀ-ն, որը հանդիսանում է միջազգային բազմաթիվ կառույցների անդամ և իր արտաքին քաղաքականության գերակա ուղղությունը հայտարարել է եվրոպական (իսկ եվրոպական ուղղության և կառույցների անբաժան մասն է կազմում նաև ՆԱՏՕ-ն), չէր կարող հաշվի չառնել եվրոպական կառույցների հետ ընդհանրական հարաբերությունները զարգացնելու անհրաժեշտությունը: Սկզբնական շրջանում Հայաստանը ՆԱՏՕ-ի հետ սահմանակցում էր որպես ԽՍՀՄ-ի մաս կազմող միութենական հանրապետություն, իսկ ԽՍՀՄ-ի լուծարումից հետո Հայաստանը սահմանակցում է ՆԱՏՕ-ին արդեն նոր միջազգային կարգավիճակով՝ որպես ինքնուրույն, անկախ և ինքնիշխան պետություն: Բայց կա կարևոր մի հանգամանք, անդամակցությունը ցանկացած ռազմաքաղաքական դաշինքին պետք է շատ հստակ պատճառաբան-

www.lawinstitute.am

ված լինի: Հայաստանի անմիջական հարևան Թուրքիան հանդիսանում է ՆԱՏՕ-ի անդամ, հետևաբար կարելի է ասել, որ ՆԱՏՕ-ի արևելյան սահմանները հանդիսանում են Հայաստանի հետ նրա սահմանները:

Եթե նայենք Հայաստանի հարակից պետություններին, կտեսնենք հետևյալը. Ռուսաստանի հետ ընդհանուր սահմանի բացակայություն, Վրաստանում տիրող անկայուն վիճակ, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակում:

Այս պայմաններում պարզ է, որ ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հնարավոր խորացումը կարող է բարձրացնել Հայաստանի անվտանգության մակարդակը: Մեր համագործակցությունն իրականացվում է գլխավորապես ԱԳԳԾ-ի ծրագրի շրջանակներում, որի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում, թե որ բնագավառում և ինչ ծավալով իրականացնի համագործակցությունը դաշինքի հետ: Հայաստանում այսօր չեն խոսում դաշինքին անդամակցելու մասին և նման հարց չի բարձրացվում, պարզապես մեր պետությունը մտադիր է լրջորեն ընդլայնել իր համագործակցությունը դաշինքի՝ անվտանգության հարցերով աշխարհի առանցքային կազմակերպության հետ:

Այսպիսով՝ ՀՀ աշխարհաքաղաքականությունը գլոբալ գործընթացներում միտված է համագործակցության հաստատմանը և առավել սերտ կապերի ձևավորմանը աշխարհի ազդեցիկ կառույցների հետ, ինչը հնարավորություն է ընձեռնում Հայաստանին գլոբալ գործընթացներում որոշակի դերակատարում ստանձնելու:

---

[1] Տե՛ս Бендиков М., Хрусталев Е., Интеграция военной инфраструктуры стран СНГ// Мировая экономика и международные отношения. N 12, 1998. С. 87.
[2] Տե՛ս Иванов И.С. Международная безопасность в эпоху глобализации // Россия в глобальной политике, N1, январь-март, 2003. С. 39.
[3] Տե՛ս Источник: Официальный интернет-представительство Президента России.
[4] Տե՛ս www.dkb.gov.ru (ՀԱՊԿ պաշտոնական կայք):
[5] Տե՛ս Документы по вопросам формирования и функционирования системы коллективной безопасности государств-участников Договора о коллективной безопасности. Выпуск N 3, М., 2001. С. 126-131.
[6] Տե՛ս www.dkb.gov.ru (ՀԱՊԿ պաշտոնական կայք):
[7] Տե՛ս Helen Wallace and William Wallace, Policy-making in the European Union, New York, 2000, p. 27:
[8] Տե՛ս Арах Метка. Европейский Союз: видение политического объединения. Москва, 1998. С. 167:

**РЕЗЮМЕ**

***Геополитика приоритетов и глобальных процессов РА***

Статья посвящена геополитике Армении в условиях глобальных процессов. Исследование включает геополитику Армении в отношении с основными глобальными структурами - СНГ, ЕС и НАТО. Раскрывается суть и цели глобальных структур и их возможное воздействие на геополитику Армении. Выбирая путь сотрудничества в глобальных процессах Армения становится частью международного сообщества.

**SUMMARY**

***Geopolitics of global priorities and processes***

The article devoted to Armenian geopolitics priorities in global process. The research target includes Armenian geopolitics towards the main global structures - CIS, EU and NATO. It show how mentioned above global structures implement their policy priorities and how it react on Armenian geopolitics. Choosing the cooperation way in global process Armenia engaged in this processes and become the part of global community.

**НАИРА ЗОГРАБЯН**
Старший преподаватель кафедры уголовного права и уголовно-процессуального права Российско-Армянского (Славянского) университета, кандидат юридических наук

**ЛИЛИТ НЕРСЕСЯН**
Студентка 4-го курса кафедры уголовного права и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета

# *ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ ИНСТИТУТА УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ В УК РА И УК РФ*

Проблема уголовной ответственности юридических лиц остаётся актуальной для правовой системы РА и РФ. Данный факт обусловлен множеством предпосылок и причин, имеющих справедливое существование, которые соответственно будут рассмотрены в пределах настоящей работы.

Итак, в целях более эффективного и всестороннего анализа проблемы уголовной ответственности юридических лиц предлагаем обратить внимание на следующие аспекты:

1) рассмотреть исторический обзор формирования и развития данного института в зарубежных странах как англо-саксонской, так и романо-германской правовых систем;

2) в чём заключается необходимость в установлении уголовной ответственности юридических лиц, если как в РА, так и в РФ уже действуют административно-правовые и гражданско-правовые способы борьбы с правонарушениями, совершёнными юридическими лицами;

3) выработать рекомендации для формирования уголовной ответственности юридических лиц и предусмотреть их дальнейшее законодательное закрепление.

### Правовое регулирование уголовной ответственности юридических лиц в зарубежных странах

Как известно англо-саксонская и романо-германская правовые системы отличаются друг от друга в первую очередь в вопросе об источниках права. Применительно к рассматриваемой теме различий много, в частности касающихся вопроса субъекта уголовной ответственности и, вообще, понятия преступления, преступного деяния. В англо-американском уголовном праве нет кодификационных норм, исчерпывающим образом регламентирующих институт лица, подлежащего уголовной ответственности. Однако в целом, основные признаки субъекта преступного деяния всё же определимы. Как это характерно для общего права, они рассредоточены и содержатся в различных источниках. Поэтому думается, изучение вопроса о субъекте преступного деяния по англо-американскому уголовному праву будет целесообразным начать с определения понятия преступления.

В уголовном праве Англии и США единое определение понятия преступления не выработано (английское законодательство вообще не знает общего понятия преступления) и единой системы признаков не существует. Кроме того, те признаки преступления, которые сформулированы в различных источниках, трактуются по-разному. Вместе с этим в целом понятие преступления в доктрине англо-американского уголовного права предполагает наличие двух основных конститутивных элементов:

1) “**actus reus**” – преступное деяние – материальный элемент, который характеризует объективную сторону преступления;

2) “**mens rea**” – виновное состояние ума – элемент, характеризующий субъективную сторону.

Для англо-американского уголовного права учение об этих элементах преступления является фундаментальным и играет в нём роль аналогичную составу преступления в других правовых системах, как например в РА, РФ, Франции, Германии и т. д . Однако можно заметить, что в приведённом определении понятия преступления субъект преступного деяния как необходимый элемент не выделен, хотя трактуется весьма широко – в него включается состояние не только интеллекта и воли, но и эмоций. Таким образом, очевидно, что в характеристику субъективной стороны понятия преступления входят и некоторые характеризую-

щие лицо, подлежащее уголовной ответственности элементы. Но так как субъектами преступного деяния по уголовному праву Англии и США могут быть как юридические, так и физические лица, очевидно, что только к последним могут относится всевозможные определения “**mens rea**”. Ведь трудно себе представить, например, эмоцию юридического лица.

Уголовная ответственность юридических лиц своим появлением в Англии обязана судебной практике. При этом английские суды рассматривают такие преступления как материальные. То есть для привлечения к уголовной ответственности юридических лиц требуется установить лишь материальный признак преступления – “**actus reus**”. Наличие вины в данном случае не является обязательным. В американском уголовном праве, как федеральном, так и отдельных штатов, корпорации при определённых условиях могут нести уголовную ответственность наряду с физическими лицами или самостоятельно. Причём некоторыми авторами институт уголовной ответственности юридических лиц в США оценивался весьма положительно. Так, Б. С. Никифоров считает институт уголовную ответственность корпораций в США как прогрессивный по своему значению[1].

Считаем уместным в рамках настоящей работы представить те судебные дела из практики Англии и США, которые стали исходными, конструктивными для формирования института уголовной ответственности юридических лиц в этих странах. Итак, в середине 19-ого века в странах общего права Англии, США, не имевших кодифицированного законодательства, где роль корпораций в ходе экономического развития стала стремительно возрастать, суды в отдельных случаях начали признавать ответственность корпораций за невыполнение лежащих на них обязанностей по закону, а затем за надлежащее совершение правомерных действий, результатом которых явилось создание опасности или неудобств обществу. В 1846 г. Лорд Денман вынес решение в деле “ The Queen v. Great North of England Railway Co ”, что корпорации могут признаваться уголовно ответственными за ненадлежащее совершение правомерных действий. Затем аналогичные решения стали выносить суды Северо-Американских Соединённых Штатов. На фоне экономического подъёма, роста числа корпораций и повышения их роли в общественной жизни возникла необходимость более жёсткой регламентации и контроля над их деятельностью. В начале 20-ого века Конгресс США в Акте Елкинса ( Elkins Act) сформулировал положение, что действие или бездействие служащего, действующего в рамках своих полномочий, считаются действием или бездействием самой корпорации. Это положение в 1909 г. было рассмотрено Верховным судом США на предмет его конституционности по делу “ The New York Central and Hudson River Railwood Co v. United States ”. При слушании апелляции на обвинительный приговор против нарушения Акта Елкинса адвокат аргументировал несоответствие Конституции раздела 1-ого Акта об ответственности корпорации за действия служащих агентов и сотрудников тем, что наложение штрафа на корпорацию за действие её сотрудников сводится к изъятию денег у невиновных акционеров и их наказанию без должного судебного процесса. Верховный суд не согласился с таким утверждением, признав возможность ответственности корпораций.

В 1978 г. генеральный атторней штата Индиана предъявил компании Форда обвинение в убийстве трёх человек, сгоревших в автомобилях марки “Пинто”. Расследование установило, что руководство компании выпустило автомобиль этой марки в продажу, зная что его бензобак расположен в опасном месте и может взорваться при столкновении. Данное дело было первым в истории американской юстиции, когда корпорации было предъявлено обвинение в убийстве.

